Է. ՏԱՐԻ 2043 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅԻՆ 28 ԱԱՀՄԻ 1383 – Հ. Տ. 6 ՆՈՅԵՄԲԵՐ 1890 – Ռ. Տ. 18 ՆՈՅԵՄԲԵՐ 1890 – ՀԻՃՐ. 5 ՐԷՊԻԼ, ԱԽԸՐ 1308 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ԱՌ ԵՒ ՈՐԵՔ ԳՐՈՒԹԻՒՆՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده‌سى آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գրանցեալ	160
» » Վեցամսեայ	80
» » Գորտ	40
Գաւառաց Տարեկան, հասցէ	200
» » Վեցամսեայ »	100
Օտար երկիրներու տարեկան գրանց	50
» » Վեցամսեայ »	30

Դուռը գրկուած լրագրաց համար նախքան Տնօրէնութեան վրայ ե Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն եւ լրագիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Արեւելեան Ափրիկէի գերմանական երկրագոյին մէջ որ Ռայսսթակին պիտի մատուցուի՝ երեք ու կէս միլիոն մարք ծախք նշանակուած է գերմանական սոյն նոր ստացուածոց համար։ Պերլինի ազատական լրագիրք այս առթիւ դիտողութիւն կ'ընեն թէ Վիսման հազարապետի արշաւանքն արդէն ութ ու կէս միլիոն մարք ծախք պատճառած է, և զարմանալի է, որ խաղաղութիւն և հանգարտութիւն գտած երկրի մը համար, ինչպէս կառավարութիւնը կը յայտարարէ թէ Արեւելեան Ափրիկէի գերմանական մասն է արդէն, նոքէն այսչափ շահողութիւնք լինին։

—Ի Վիեննա ձերբակալեցաւ ռուսական սլաւ հրապարակագիր մը, Պ. Սփիրիտոն Կոփչեւիչ, պալքանեան երկրաց վրայ իւր ուսումնասիրութեամբք ծանօթ։ Այս մարդ վերջին օրերս արտասահմանէ ի Վիեննա դարձած էր, և իբր թէ վեհապետական գերդաստանի անդամց միոյն դէմ խօսք զրուցած լինելու ամբաստանութեամբ բանտարկեցաւ։ Վերջին ժամանակներս այս մարդ հակասեմական շարժման մէջ մտած էր, և հանապազօրեայ թերթ մը հիմնելու փորձ մ'ըրաւ, բայց չյաջողեցաւ։ Իւր աշակերտներէ մին, որ այս հրատարակութեան համար պիտի օգնէր իրեն, և որուն հետ վէճի մէջ կը գտնուէր, ոստիկանութեան իմաց տուեր է սլաւ հրապարակագրին խօսքերն։ Աւստրեան օրէնքը շատ խստապահանջ է վեհապետական գերդաստանի անդամց վերաբերեալ գործերու և խօսքերու համար։

—Թրանսիլվանիոյ Ռումանաց այս օրերս ծանուցեալ և նկարագրեալ ժողովը ի Հերմանշթատ հակամաճառ զգացումներու արտայայտութիւն յառաջ բերաւ Ռումանիոյ Համալսարանաց մէջ, և ռուսական կուսակցութիւնն այս հոսանքէ օգուտ քաղից կազմելու համար ընկերութիւն մը, որոյ հոգածութեան առարկայ պիտի լինին Թրանսիլվանիոյ Ռումանք։ Այս ընկերութիւն իւր շրջաբերականաւ դիտողութիւն կ'ընէ Մաճառաց ընթացքին դէմ ի մասին հունդարական բաժնին մէջ բնակեալ Ռումանաց, եւ կը պահանջէ որ Ռումանք իրենց բնագաւառին մէջ աւելի հանգիստ և գոհ մնալու կարող լինին։

—Պ. Օ'Պրիէն և Պ. Տիլլոն, որք Իռլանտայի սովուն պատճառաւ հանգանակութիւն ընելու գացին Ամերիկա, լաւ ընդունելութիւն կը գտնեն Ամերիկացիներէն և ամերիկաբնակ Իռլանտացիներէն։ Առաջին գումարման մէջ յորում խօսեցան, 73,000 տոլար հանգանակեր են։ Այս առթիւ արտասանեալ բանախօսութիւնք խստիւ կը քննադատեն Պահպանողականաց Իռլանտայի հետ վարուելու կերպը։

—Պ. Սթէնլի, նմանապէս ի Նիւ Եորք, իւր առաջին հրապարակախօսութիւնն ըրաւ, նկարագրելով իւր ուղեւորութիւն Խաւարակուռն Ափրիկէի մէջէն։ Ամերիկայի համբաւոր քաղաքագէտներէն և ատենախօսներէն մին, որ նախագահութեան թեկնածու է, Պ. Զօնսէյ Տէփիու, զՊ. Սթէնլի ներկայացնելով ունկնդրաց, Մեծին Ալէքսանդրի և Քրիստափոր Կոլոմպոսի նմանցուց զնա։

—Պ. Օ'Պրիէն իւր բանախօսութեամբ յԱմերիկա ցոյց տուաւ թէ շատ մը երկրագործք իրենց մշակած հողերէն և բնակած տուներէն կ'արտաքսուին ճիշդ ա'յն պատճառաւ որ՝ հնձոց անյաջողութեան բերմամբ՝ հողատերաց պահանջած վարձքերը վճարելու անկարող կը լինին։ 1845 էն ի վեր այսպէս իրենց բնակարաններէն արտաքսեալ Իռլանտացւոց թիւն երեք միլիոնէ աւելի կը հաշուէ իռլանտացի ատենաբանը։

—Պ. Տիլլոն իւր ճառով ըսաւ թէ Իռլանտա կղզին ամեն տարի 50,000 մարդ կը կորուսանէ, որք կը գաղթեն՝ կղզւոյն տեղական պայմաններն անհամաձայն գտնելով բարեկեցութեան հետ։ Դարուս սկիզբէն ի վեր, երբ Իռլանտայի ուրոյն Խորհրդարանը փակեցաւ, կղզին քանի գնաց աղքատացաւ։

—Զարեւիչը փառաւոր ընդունելութիւն գտաւ Ցունսատանի մէջ։ Զինք բերող ռուսական նաւախմբին ի Պիրէն մնաենալուն առթիւ ո'չ միայն հելլենական ամբոխութիւնք և մարտանաւք այլ և ֆրանսական մարտանաւ մը թնդանօթներ արձակեցին, և ժողովուրդն համակրալից ցոյցեր ըրաւ արքայական գերդաստանին այս մօտիկ ազգականին։

—Հարթէնաուի կոմսը (Պաթենբերկեան Ալէքսանդր իշխան) նոյմ. 15ին իւր վաշտին սպայքն համախմբելով, իւր զինուորական անցեալն յիշեցուց, և ըսաւ թէ իւր նպատակն է իւր հրամանաց ներքեւ գտնուող զօրքն օրինակելի վաշտ մ'ընել, և ծանոյց թէ Ֆրանձ Եոզէֆ Կայսր ի մօտոյ Կրաց պիտի գայ պահապան զօրքն աչքէ անցուցանելու։ Աւստրիոյ պատերազմական նախարարութեան մէկ հրամանագիրը կը պատուիրէ Հարթէնաու կոմսին գնդապետ տիտղոսը տալ զինուորական ծառայութեան մէջ և արտաքոյ այն ծառայութեան։ Այսպիսի հրաման մը հանել հարկաւոր դատուած է՝ զի սպայք ոմանք իրենց նոր գնդապետին «Ն. Բարձրապատուութիւն» տիտղոսը կուտային որ կայսերական գերդաստանի անդամներուն կամ իշխաններուն միայն կը տրուի։

—Անգլիոյ և Ամերիկայի Հրեայք գումարումներ կ'ընեն իրենց Ռուսիոյ բնակ կարօտեալ եղբարց վիճակին բարելաւութեան համար։ Ի Ֆիլատէլֆիա, Լոմպարտ փողոցի սինակոկն նոյմ. 10 ին լի էր Ռուսիայէն գաղթած Հրեայներով, որք նկատողութեան առին Միացեալ Նահանգաց արտաքին գործոց նախարար Պ. Պլէնի ընդարձակ տեղեկագիրը՝ Ռուսիոյ Հրէից վիճակին վերաբերեալ թղթակցութիւններ պարունակող։ Որովհետեւ այս Հրէից մէջ կան որք ամերիկեան քաղաքացւոյ իրաւունքները կը վայելեն՝ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը մասնաւոր իրաւունք մը կ'ունենայ բարեկամական դիտողութիւններ ուղղելու ռուս կառավարութեան։ Ի Ժողով գումարեալ Հրեայք ընորհակալ եղան Միացեալ Նահանգաց կառավարութեան հոգածութեան համար և Պ. Պլէնի յօրինած ընդարձակ տեղեկագրոյն համար, և ինչ ինչ տեղեկութիւններ եւս խնդրեցին Հրէից Ռուսիայէն խումբ խումբ արտաքսուելուն վրայ։ Անգլիոյ Հրեաներն եւս յաջողեցան համոզել նորընտիր Լորտ Քաղաքապետն որ քաղաքապետական պաշտօնն մէջ պաշտօնական գումարում մը լինի Ռուսիոյ Հրէից վիճակին վրայ խորհրդակցելու համար։ Նախորդ Լորտ-Քաղաքապետն, որոյ պաշտօնը նոյեմբեր 9 ին վերջացաւ, Հրեայ էր ցեղով ու կրօնով, բայց անոր իշխանութեան օրով այսպիսի թոյլտուութիւն մը չէր եղած, կարծելով թէ լոկ չափազանցութիւն են Ռուսիոյ Հրէից վիճակին վրայ գրուածները։ Բայց յայնմհետէ բաւական լոյս տրուեցաւ խնդրոյն վրայ, և Անգլիոյ Հրեայք համոզուեցան թէ եղած նկարագրութիւնք բաւական ճշմարիտ են, և կարծեաց հրապարակային արտայայտութիւն մ'ընել անհրաժեշտ է։

—Ֆրանսական դժբախտ «Մետաղաց Ընկերութեան» հաշուեյարդար Պ. Լըվասէօր իւր տեղեկագրով կը ցուցնէ թէ պղինձի գնոյն բարձրացման հակառակ այս հաշուեյարդարութիւն աղետալի հանդամանք պիտի ունենայ։ Զի բաժնետարց ձեռքը բան մը չպիտի անցնի, իսկ պահանջատերաց, գրաւատերաց և այլ առնելիքներու 34 առ 100 միայն պիտի տրուի։ Զի Ընկերութեան վերջնական պարտքն է 111 միլիոն ֆր., իսկ գոյքն՝ 38 միլիոն ֆրանք։

ԲԱԳՈՒ

Բագուն գտնուելէ Կասպից ծովի Ապշերոնեան թերակղզիի վրայ։ ունի ընդարձակ նաւահանգիստ և նահանգական քաղաք է։

Բագուն զուրկ է բուսականութիւնից, հոսող գետակ կամ աղբիւրներ չունէ, ծովի ջուրը խիստ աղի և դառնահամ է, ազգաբնակութիւնը կենսական պահանջներին բաւականութիւն է տալիս ջրհորներից որի ջուրը դարձեալ աղի է, բայց առողջարար։ Քաղաքային վաբչութիւնը արդէն ձեռնամուխ է եղել հեռու տեղերից ջուր բերելու։ Քաղաքի շրջակայքը ծածկուած է աւազի հաստ շերտերով։ շընորհիւ անբուսականութեան՝ երբ բարձրանում է հարաւային քամին, այնքան կուրացնող փոշին կեանքը անտանելի է դարձնում մարդուն, և երեւակայել է տալիս Սահրայի անապատի դառնաշունչ փոթորիկը։

Բագուն Ռուսաց ձեռքն անցնելուց, այդ ժամանակը մի փոքրիկ միջնաբերդէր, զուտ պարսիկ բնակիչներով, եւ այդ նոր նուաճած քաղաքը ծառայում էր Ռուսաց յանցաւոր դատապարտեալների համար իբրև աքսորատեղի։ Բայց այսօր Բագուն իւր նախկին դիրքի հակապատկերն է ներկայացնում։ նախկին անշուք տներին, աղբոտ ու ծուռ փողոցներին տեղի է տուել եւրոպական ճաշակի հակայատիպ ներքատաշ քարերից դեղեցիկ ներկած կոկիկ ճոխ շինութիւններ (բերդից դուրս)։ ուղղահայեաց լայն սալատակած մաքուր փողոցները կպրեալ մայթերով, փստահար կարելի է երկրորդ Մոսկվա համարել։ Բագուն ունէ Սեւ ծովի հետ երկաթուղային հաղորդակցութիւն, Թիֆլիսի և Բաթումի վրայով երթեւեկելիս։ Իսկ Ռուսաստանին հաղորդակցում է ծովային ճանապարհով հարիւրաւոր շոգենաւերի միջոցաւ։ Նոյնպէս Պարսկաստանի հետ ունէ հարուստ առեւտրական յարաբերութիւն։ իսկ միւս կողմից է Անդրկասպեան երկիրները։ յիսդ չեն մեռում հում բերքերի արտահանութեամբ։ Եթէ դորա վերայ աւելացնենք աշխարհահռչակ նաւթի քարիւղ, արտահանութիւնը որի քանակութիւնը մի քանի հարիւր միլիոնների է հասնում։ Շնորհիւ իւր առատաբուղխ բնական հարստութեամբ և առեւտրական արտահանութեան կեդրոնատեղի, Բագուն դէպ ի յառաջադիմութիւնը հսկայական քայլեր է անում։ Հեռու չէ այն օրը որ Բագուն իւր դիրքով կովկասեան քաղաքների աստղը համարուի։

Նաւթի մշակութիւնը տարեց տարի կատարելագործվում է հմուտ քիմիկոսների և նորագիւտ մեքենայների շնորհիւ։ օրինակ մի 10 տարի սորանից առաջ երբ նաւթը նահապետական ձեւով էր մշակուում, այդ ժամանակները Աստրախանից (Հաշտարխան) գալիս էր մի շոգենաւ, ամբողջ ամիսներով սպասում էր որ հազիւ կարողանում էր մի երկու հարիւրաչափ տակառ բեռ վերցնել։ իսկ ներկայումս Բագուի գործարանները մի օրում, 15 շոգենաւներ կարող են բարձել ճանապարհել։

Նաւթային հանքերը գտնուում են Բագուից 11 վերստ հեռաւորութեան վերայ և կոչուում են Բալախանի, որն յայտնի է բազմաթիւ նաւթահորերով։ Նոյնպէս կայ Սուրախանում և Բիբի-Հէյբաթում։ թէեւ դոցա չրջակայքում քիչ չէ նաւթաբուխի գետիներ, բայց մինչեւ այժմ անմշակ է։ Սուրախանում կայ իբրեւ հնութեան մնացորդ կրակապաշտների Տաճար ուր շնորհիւ մշտաբուխ նաւթի, այրուելով ծառայում են սրբազան ծեսերը կատարելիս ինչպէս անշեջ կրակի։

Գործարանները գտնուում են քաղաքից մէկ ու կէս վերստ հեռաւորութեան վերայ։ այդեղ են գտնում նաւթը բաղմաթիւ բաղադրութեան միջոցաւ, և գոյացնում են գործածական կերոսինը կամ Պետրոհոլումը լուսաւորութեան համար։ Գործարանները գործածական խօսքով կոչուում են Սեւ-Քաղաք։ Սեւ մականունը յառաջ է եկել այն դէպքից երբ նախկին ժամանակներս գործարանների հնոցները վառում էին նաւթով կամ նաւթային մնացորդով։ հետեւաբար գոյանում էր թանձր ամպանման ծուխ, և ծածկում էր ամեն ինչ սեւ տիղմով։ անծանօթ մարդը մտնելով գործարանների այս ծայրից միւս ծայրը՝ դուրս գալով եթէ նայէր հայելու մէջ իւր դէմքը, ոչ մի կերպ չէր կարող համաձայնուիլ որ այդ իրա դէմքն է։ Անցաւ նախկին տգիտութեան օրերը։ գիտութիւնը մեծ յեղաշրջումներ մտցրեց կարճ ժամանակի ընթացքում։ Այսօր նախկին ծխի և մրուրի փոխարէն, տանիքներից փայլուն խողովակներից վշվշալով դուրս է փչում ձիւնագոյն շոգին։ Դիշերները առաջնակարգ գործարանները լուսաւորում են եղելքտրական լոյսով, ամեն ինչ նոր ձեւի և նոր կանոնաւ։ Նաւթային հանքերում կամ գործարաններում աշխատում են մօտ 20,000ի չափ մշակներ, արհեստաւորներ և ծառայողներ։ գիշեր ցերեկ գործը եռում է։ Արհեստագիտութեան մէջ մեծ մասը հայերն են կազմում։ այսօր ունինք հայ արհեստաւորների մի ստուար խումբ որը կատարելագործուած է փականագործութեան, ատաղձագործութեան և քիմիական մանածիւղերի մէջ։

Ընդհանուր գործարանների թիւը հասնում է մօտ երեք հարիւրի որոնք են՝ նաւթային, հանքային իւղերի, օճառի, ծծումբաթթուի, ծխախոտի, բրինձի և ուրիշ արդիւնաբերութիւնների։ Քաղաքիս ազգաբնակութեան մեծ մասը թուրքերն են կազմում, այնու հետ հայեր, ռուսներ և ուրիշ փոքր բայց բազմանալու ազգեր։ Հայերը ունին երկու եկեղեցի, ռուսերը նոյնպէս երկու, թուրքերը տասնի չափ մզկիթներ և այլն։ Հայերը շնորհիւ առեւտրական յաջող պայմանների, ընտանիքով դաղթել են և բնակութիւն հաստատել։ դոցա մեծամասնութիւնը Ղարաբաղցիներ են և Շամախեցիներ, որոնցից շատերը ահագին կարողութեան տէր են, և ունեն արդիւնաւոր կալուածքներ, նաւթահորեր ու գործարաններ։

Այստեղ հայերը ունեն Մարդասիրական ընկերութիւն։ նիւթականապէս ապահովուած է։ ունի խոշոր դրամագլուխ, մեծ նպաստներ է տալիս աղքատ գիւղերի ծխական դպրոցի և պահում է որդեգիրներ, որոնք ուսանում են Ռուսաստանի թէ արտասահմանեան բարձրագոյն դպրոցներում։ քաղաքիս երկսեռ երկդասեան և միադասեան ծխական դպրոցները նորա հոգատարութեան ներքոյ է։ Հանգուցեալ Գէորգ աղա Լալաեանցի նախաձեռնութեամբ և նիւթական խոշոր զոհաբերութեամբ կառուցուած է ազգային աղքատանոց։ Առհասարակ Կովկասի մէջ Բագուցի հայերը բարեգործական նպատակների համար իւրեանց նուիրատուութեամբը ամենաառատաձեռն են։ Հայ կանայք, ինչպէս պարտաճանաչ տիրերի՝ տնտնիներ, բարի նախանձից դրդուած դոքա էլ մինչ մի տարի է որ հիմնել են «Բագուի հայ կանանց Բարեգործական ընկերութիւն»։ Հ.

ՏԲԹ. ԲՈԽԻ ԳԻՒՏԸ

ԹՈՒՔԱԽՏԱՒՈՐԷ Ի ՊԵՐԼԻՆ

Պերլինէ նոյմ. 11 թուով կը հեռագրուի անգլիական լրագրաց։

«Այսօր տեսակցեցայ Տ'թ. Նասէի հետ, Փրոֆ. Պերկման աջ բազուկը՝ հիւծախտաւորաց դարմանին համար։ Տ'թ. Նասէ օտար հիւծախտաւորաց խորհուրդ կուտայ ըստ կարի չուտ Պերլին գալ, ամենէն յառաջ դարմանուելու համար երբ հիւծախտի պատուաստման գործողութիւնն ընդհանուր կերպիւ սկսի։

«Այս պահուս Փրոֆ. Պերկման պարապ կը կենայ, որովհետեւ պատրաստ պատուաստ չէ մնացած։ Տ'թ. Բոխ կ'ըսէ թէ երկուքէն մինչեւ վեց շաբթուան մէջ նոր պաշար պիտի ունենայ։ Այն ատեն պիտի կարենանք (կ'ըսէ Տ'թ. Նասէ) դարմանել վիրաբուժական-հիւծախտական ամեն հիւանդներն որք ներկայանան՝ իրենց ընդունելութեան կարգաւ։ Պատուաստի գործողութեան ընդհանուր կերպիւ սկսելէն յառաջ Պերլին եկող հիւանդք պէտք է քիչ մը համբերող լինին, և իրենց հիւանդութիւնն աւելի չծանրացնեն՝ անմիջապէս չդարմանուելնուն համար զայրանալով։ Մէկ երկու շաբաթէն անշուշտ պիտի դարմանուին։ Բայց որովհետեւ հիւծախտաւորաց մեծ բազմութիւն մը պիտի գանուի ի Պերլին, կանխաւ իմաց տալ օգտակար է։»

* *

Փրոֆ. Պերկման առաջիկայ ամսոյն մէջ պիտի սկսի Տ'թ. Բոխի գիւտը բացատրել Պերլինի Բժշկական Վարժարանին ուսանողաց՝ կանոնաւոր դասախօսութեանց ձեւով։

—Տ'թ. Լէվի, արհեստական միութեանց բժիշկն, որ գործաւոր դասուց մէջ կ'աշխատի, ըսաւ։ «Ինձ տրուած հրամանին համեմատ, ներկայացող հիւանդաց մէջէն կ'ընտրեմ վիրաբուժական դէպքերը միայն, իբրեւ ամենէն աւելի չահեկան առարկայ փորձառական կիրառութեան։ Այս ընթացքը պիտի փոխենք երբ պատուաստի պաշարը շատնայ և կարող լինինք անխտիր ամեն հիւծախտաւորները դարմանել։»

* *

Անգլիացի թղթակիցք կ'իմանան թէ բուն թոքի հիւծախտն ամենէն աւելի դժուար կը բուժի։ Բայց կը բուժի, միայն թէ վեցէն մինչեւ ութ շաբաթ պէտք է շարունակել դարմանը։

—Բրուսիոյ կրօնական, կրթական և բժշկական գործոց նախարար Տ'թ.

— 78 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԻՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹՇՆԱՄԻՆ

—Ընդհակառակն ըսէ նոտարիդ որ քաղաքին կեդրոնը բնակարան մը գտնէ։ Ոչ առանձնութիւն է եւ ոչ ուրիշ տեսակ մեկուսացում մը որ պէտք է Օռօռին։ պէտք է որ գործոն կեանքի շարժման և աղմուկին մէջ գտնուի։

—Այդպէս կը գրեմ Պ. Բօռվիզիէին։

—Որոշած ես, այնպէս չէ՞, որ պէտք եղածին չափ ատեն աղջիկդ հեռու պիտի մնայ։

—Վերջին ատիճան անհանդուրժելի պիտի ըլլայ ինձ այս բանը։ բայց խոստացայ քեզ այս զոհողութիւնն ընել։ Միայն թէ...

—Ի՞նչ։

—Չեմ գիտեր ի՞նչ պիտի ընեմ այս բռնազբօսիկ բաժանման միջոցին։

—Մտիկ ըրէ՛։ կարծեմ ըսի, բաւական երկայն ճամբորդութիւն մը ունիմ ընելու։ պէտք է որ Ամերիկա երթամ և անկից Մեծ Հնդկաստան։ Ութ կամ տասը օրէն Բարիզէն պիտի մեկնիմ։ եթէ կ'ուզես, կ'ընկերանաս ինձ։

Վայրկեան մը վարանելէ վերջը, կոմսը պատասխանեց։

—Կիյեօմ, քեզ հետ կը մեկնիմ։

—Ապրի՞ս։ կը յուսայի որ պիտի հաւանէիր, աղաղակեց հոլանտացին զուարթ ձայնով մը։ Մինչդեռ աղջիկը Բարիզի մէջ պիտի բուժեն, ես հայրը Ծովերէն անդին պիտի բուժեմ... որովհետեւ դուն ալ քիչ մը հիւանդ ես, խելքդ բարեկամս, աւելցուց ժպտելով։

Պ. տը Լաֆէռ երկայն հառաչ մը արձակեց։

Անշուշտ իր աղջկան, իր սիրելի գանձին վրայ կը մտածէր, ուսկից պիտի բաժնուէր ընդհուպ։ Օռօռ այլ ես իրենը պիտի չըլլար, օտարական, անծանօթ կընոջ մը պիտի վերաբերէր։

—Սիրտ ա՞ռ, ըսաւ Պ. վան Օսէն։ կոմսը թեթեւ մը ժպտեցաւ։

—Պիտի ջանամ, պատասխանեց։

—Հիմա, ուրիշ բանի խորհինք, ըսաւ հոլանտացին։ աղջիկդ չես կրնար Բարիզ, բնակարանի մը մէջ հաստատել, մի միայն դաստիարակուհւոյ մը և սպասուհւոյ մը հետ։

—Ճշմարիտ է։ Արդէն եռ ալ նոյն դիտողութիւնը պիտի ընէի։

—Շատերը եւ նոյն իսկ դաստիարակուհին այդ բանը տարօրինակ պիտի գտնէին։ Պէտք է որ անպատճառ աղջկանդ քովը գտնուի, եթէ ազգականուհի մը չուզէ, տարիքը առած կին մը, քիչ մը ազնիւ ընտանիքէ մէկը, որ օրինակի համար իր հօրաքոյրը համարուէր։ Բարիզի մէջ ոսկիով կարելի է ամեն բան գտնել։ Նմանապէս Պ. Բօռվիզիէին պէտք է որ յանձնարարես պատկառելի կին մը գտնել, որ հաւանի Օռօռի քով գորովալից և անձնուէր ազգականուհւոյ մը տեղը բռնել։

—Այդպէս կին մը կայ, ըսաւ Պ. տը Լաֆէռ, որ վայրկենէ մը ի վեր կը մտածէր։ Թէռնի մէջ, Բօնսըլէ փողոցը կը բնակի։ Բառասուն և հինգ տարեկան այրի մը է։ պատուական դաստիարակութիւն մը ընդունած է։ ուսեալ է և բաւական ազնիւ տոհմէ մը է։ Իր մայրն իմիոիս բարեկամուհին էր։ իր տղայութեան ատեն ճանչցած եմ զայն։ Քսան երկու քսան երեք տարեկան եղած ատեն ամուսնանալով Տըլօռմ անուն ցորենի վաճառականի մը, քսան եւ ութ տարեկան հասակին մէջ այրի մնաց։ Իր ամուսինն իրեն շատ մը խառնաշփոթ գործեր կը թողուր։ ահագին պարտք մը։ Պ. Բօռվիզիէ իմ խնդրանաց վրայ օգնեց անոր այդ նեղութիւնէն ազատելու։ Բայց իր անանկացումն անխուսափելի էր։ Սակայն նորէն կարօտութեան մէջ չէր մնացած։ ստիպեցի այն ատեն որ ընդունի տասներկու հազար ֆրանքի պղտիկ եկամուտ մը, զորս նոտարս կանոնաւորապէս իրեն վճարէ, այնուհետեւ կ'աշխատի ալ քիչ մը։

«Պէտք չունիմ ըսելու թէ տիկին Տըլօռմ բոլորովին անձնուէր է ինձ։ անշուշտ պիտի չ'մերժէ այն ծառայութիւնը զոր մտածեր եմ խնդրել իրմէ։ Աղջիկ մը ունէր։ Պ. Բօռվիզիէ ինձ ըսած է թէ տասն եւ շորս տարեկան եղած ատեն մեռեր է։ Ինչպէս կը տեսնես, տիկին Տըլօռմ բոլոր ուզուած յատկութիւններն ունի և պէտք եղած պայմաններուն մէջ կը գտնուի, աղջկանս համար ճշմարիտ մայր մը պէտք պիտի ըլլայ։

—Կը հաւատամ։ Լա՜ւ, իմ երեւակայածս հրաշալի կերպով կը կարգադրուի։ ասիկայ բարի գուշակութիւն մըն է, յուսանք։

—Այս իրիկուն չեմ գրեր Պ. Բօռվիզիէին։ բայց վաղը, կանուխ, Բարիզ կը մեկնիմ։ Որովհետեւ պէտք է տեսնեմ տիկին Տըլօռմը, նոտարս ալ կը տեսնեմ։ Նամակ մը աւելի աղէկ է այսպէս։

—Անշուշտ։

—Դու հոս կը մնաս, Կիյեօմ, իմ դարձիս կը սպասես։

—Բանի որ կ'ուզես անպատճառ...

—Ապա թէ ոչ չեմ երթար։

—Ինչո՞ւ։

—Ատուած իմ, չեմ գիտեր... կը վախնամ որ... թոթովեց կոմսը։

—Կը վախնաս որ այդ երիտասարդը, զոր աղջիկդ Ատրիէն կը կոչէ, հոս նորէն գալու յանդգնութիւնը ունենայ։

—Այո։

—Օ՜ն, օ՜ն, ապահով եղիր։ Պ. Ատրիէն իմ խօսքիս մտիկ ըրաւ։ Բարիզ դարձաւ։

—Ադկից լաւ բան չէր կրնար ընել։

—Այո, հիմակուհիմայ։

—Ելը կարծե՞ս որ վերջը...

—Ինչո՞ւ չէ։

Կոմսին աչքերուն մէջ մթին լոյս մը շողաց։

—Կ'ապաչեմ, հանդարտէ, ըսաւ Պ. Վան Օսէն։ կարծես թէ մոռցար Օռօռի նկատմամբ ունեցած լաւ դիտաւորութիւնդ։

—Ոչ, բայց...

—Բայց, ի՞նչ։ Պատասխան չունիս տալու։ Օռօռ երբ բժշկուի, ուրիշ աղջիկներու պէս պիտի ըլլայ։ միևնոյն տենչերը, միևնոյն բաղձանքները պիտի ունենայ։ Կամայ ակամայ պէտք պիտի ըլլայ ամուսնացնել զայն։ ինքը պիտի ուզէ։ Ո՞վ գիտէ թէ այդ Պ. Ատրիէնն իրեն սահմանուած ամուսինը չէ։

—Երիտասարդ մը զոր չեմ ճանչնար, ժպիրկ մէկը...

—Մի՛ աւարտեր խօսքդ, ընդմիջեց Պ. Վան Օսէն։ Ոչ, չես ճանչնար զայն։ կ'ուզէր իր անունն ըսել քեզ։ մէկ բառով իր բերանը գոցեցիր։ Ադ երիտասարդը որուն հետ այնպէս գէշ վարուեցար,—օ՜հ, իրաւացի էր բարկութիւնդ,—այդ երիտասարդն ամենաբարձր ընկերութեան մը կը վերաբերի։

—Կը ճանչնա՞ս զայն։

—Կը ճանչնամ։

—Շա՞տ ատենէ ի վեր։

—Քանի մը տարի կայ։

—Իրա՞ւ։

—Զմեռը, յանախ կը տեսնեմ զայն սրահներու մէջ։ Պէտք չունիմ ըսելու թէ զարմացումս մեծ եղաւ հոս հանդիպելով անոր։ Կրնաս ապահով ըլլալ որ բնաւ յոռի դիտաւորութիւն մը չունի։ հաւանականաբար հեւաբերբերութիւնն է որ առաջին անգամ զայն քու տունդ բերաւ։ Օռօռի գեղեցկութիւնը, չնորհն ու անբացատրելի հրապոյրը զոր կ'ազդէ նա իր քով գըտնուողին զայն քաշած են։ և վերստին եկած է հոս։ Նշմարա՞ծ է աղջիկդ մտանոր տկարութիւնը։ Կարծեմ, եւ նոյնպէս կը կարծեմ թէ աղջկանդ վիճակը նպաստած է անոր սրտին մէջ մեծ գորով մը, խորին համակրութիւն մը արթնցնելու։ Ճշմարիտ ա՞ր է զոր աղջիկդ ներշնչած է անոր։ Չեմ կրնար հաստատապէս ըսել զայդ... Սակայն առանց վարանելու, անկեղծ թեան շեշտովը, ըսած է ինձ թէ Օռօռը կը սիրէ։ Չգիտնալով թէ ո՞վ ես գու, թէ ինչ դասակարգի կը վերաբերիս, և թէ ինչ ատիճան է քու հարստութիւնդ, ըսաւ ինձ որ երջանիկ պիտի ըլլար եթէ ամուսնանար Օռօռին հետ։ Նոյն իսկ խնդրեց ինձմէ որ իրեն ի նպաստ խօսիմ, իր դատը պաշտպանեմ։ անշուշտ պիտի կատարէի իր խնդիրքն, եթէ աղջիկդ կարենար հիմայ ամուսնանալ։ Պէտք է սպասել, վերջը տեսնենք ինչ ըլլայ։

«Այնուհետեւ մեր երիտասարդը կը բնայ խաբուած ըլլալ իր զգացմանց մէջ։ Պարկեշտ վեհանձն, եռանգուն ըլլալով, կրնայ ըլլալ որ վայրկենական յափշտակութիւն մը ունեցած ըլլայ։ Վերջապէս, կը կրկնեմ, տեսնենք վերջը ինչ կ'ըլլայ։

—Մոռցար իր անունն ըսելու։

—Ոչ, չեմ մոռնար, ըսի թէ բարձրագոյն դասակարգէ մըն է։ Մեղքը կորսնցուցած է։ վերջին մնացորդն է Ֆրանսայի չատ հին եւ շատ ազնուական ընտանիքներուն միոյն։ Վէռվիլի մարգիզ կը կոչուի։

(Շարունակելի)

կոչէր Նոյմ. 11ին ընդունեց զՏքթ. Քոխ, որ հաստատեց թէ իւր գտած պատուաստին շինութիւնն ա՛նքան բազմաժախս է որ ազգատ հիւանդներ իրենց ծախքով չեն կրնար դարմանուիլ եթէ կառավարութիւնը չիւրացնէ թոքախտի պատուաստ[illegible]

—Հետզհետէ Պերլին Պերլին երթալու դիտաւորութիւն յայտնող բժիշկներու և Փրոֆէսէօրներու բազմութեան նայելով, Տքթ. Քոխի մեծաւ անհամբերութեամբ սպասուած հրապարակախօսութեան առթիւ, բժշկաց և գիտնականաց նոյնքան մեծ բազմութիւն մը պիտի լինի Պերլինի մէջ որչափ վերջերս Բժշկական Համաժողովոյն առթիւ, (քանի մը հազար բժիշկներ և գիտնականներ ամեն երկրէ և ամեն ազգէ)։

* *

Տքթ. Քոխի գտած պատուաստն ի մօտոյ բժշկաց տրամադրութեան ներքեւ պիտի դրուի։ 25-30 անգամ ներարկուելու չափ պատուաստ պարունակող մէկ փոքր շիշը 25 մարք (շիլին) է։

* *

Պէօրլէն Բ-ոյէնէ Նոյմ. 12 թուով կը ծանուցանէ թէ Տքթ. Քոխ այնչափ յառաջ տարած է իւր գործ որ ուղղակի իւր տրամադրութեան ներքեւ 100 անկողնով հիւանդանոց մը կը հաստատուի յԱլզրէխթ Սթրասէ։

—Տքթ. Քոխի ձեռամբ դարմանուիլ ուզողներ իրենց խնդիրքը կ'ուղղեն ո՛չ թէ առ Տքթ. Քոխ որ շատ զբաղեալ է, այլ առ Տքթ. Քոխնէթ, իւր օգնական, կամ առ Տքթ. Փֆէյֆէր, Առողջապահական կայսերական Վարչութեան մէջ։

—Անհիմն է այն լուր թէ կայսրն երկու միլիոն մարք Տքթ. Քոխի տրամադրութեան ներքեւ դրեր է իւր փորձերը շարունակելու համար։ Միայն կրթական, կրօնական և բժշկական նախաբար Տքթ. Կոպէր երկու հարիւր հազար մարք Տքթ. Քոխի տրամադրութեան ներքեւ դրաւ՝ վերոյիշեալ 100 անկողնով հիւանդանոցին հաստատման համար։

—Այս երկուշաբթի Պերլինի Վիրաբուժական Ընկերութեան ներկայացուեցաւ հիւանդ մը որ Տքթ. Քոխի դրութեամբ աղէկցած է։

* *

Հեռագիրն երէկ ծանոյց թէ Տքթ. Քոխի դիւտին պաշտօնական հրատարակութիւնն եղած է շաբաթ օր միանգամայն թէ՛ Պերլինի և թէ Վիեննայի մէջ։ Պերլինի Տէօյչ Մեդիցինիշէ Վոխենշրիֆթ շաբաթական բժշկական թերթին մէջ երեւցաւ Տքթ. Քոխի դիւտին բացատրութիւնը, նմանապէս ի Վիեննա՝ գլխաւոր բժշկական թերթին մէջ։ Աւելի ընդարձակ հրատարակութիւն մը պիտի լինի նոյն իսկ Տքթ. Քոխի հրապարակախօսութիւնն, որուն անհամբեր կը սպասուի բժշկական աշխարհին մէջ։

* *

Ֆրանսական լրագրութիւնն ուշադրաւ լռութիւն մը կը պահէ Տքթ. Քոխի դիւտին վրայ, որ Ֆրանսայէ դուրս ամեն քաղաքակիրթ երկրաց լրագրութեան մեծագոյն զբաղումն է այս պահուս։

Այն մի քանի Փարիզեան թերթերը որք կը բարեհաճին երկտողիւ մը ակնարկել այս անոյշ դէպքին, կը հրաչակեն թէ «Տքթ. Քոխ իւրացուցած է Ֆրանսացի երկու գիտնականներու գիւտը, Վիլմէնի, որ հիւծախտին միկրոբով մը յառաջ գալն ապացուցած էր, և Փասթէօռի, որ թեթեւացեալ պատուաստի միջոցաւ բուժելով կատաղութիւնն, ելունդն և ուրիշ ախտեր, ճարայ բացաւ գերման գիտնականին»։

Ուշիմ թռչ կը գրէ։

«Կը կարծուի թէ Տքթ. Քոխի պատուաստին ներարկումն անմիջապէս կ'ազդէ հիւծախտային ամեն հիւանդութեանց վրայ։ Այս ներարկմամբ հիւծախտաւոր հիւանդաց ջերմութիւնը կ'աւելնայ, և կը փսխեն։ Իսկ «բրիչ հիւանդութիւնց վրայ, ընդհանրապէս, ազդեցութիւն մը չունի Տքթ. Քոխի գիւտն»։

Բայց ո՞վ կ'ըսէ թէ Տքթ. Քոխ փանասէ մը գտած է որ ամեն տեսակ երեւակայելի և անհերեւակայելի հիւանդութիւններ բուժէ,— մինչեւ իսկ այն բարոյական հիւանդութիւնն որ «նախանձ» կը կոչուի։

ՍԵԼԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ Ի ԼՈՆՏՈՆ

Շաբաթ օրէն ի վեր հրապարակին վրայ զրոյց մը կար թէ ի Լոնտոն առաջնակարգ դրամատուն մը անանկացեր է։ Իրաւ, սեղանաւորական տագնապ մը ծագած է ի Լոնտոն, որ բարեբախտաբար անանկութիւն չէ ճըշդիւ։ Պէրլինկ Եղբարց դրամատունը Ռոչիլտէն ետքն առաջնակարգ դրամատունը կը համարուի Անգլիոյ մէջ, և Եգիպտոսի փոխառութիւնք և այլ արեւելեան սեղանաւորական գործառնութիւնք ըստ մեծի մասին Պէրլինկեան դրամատան ձեռամբ կամ մասնակցութեամբ կատարուած են։ Լորտ Նորթպրուք այս դրամատան պետն է, կամ դէթ իւր եղբարք են անոր գլխաւոր դրամատեարք և վարիչք, և Պ. Կոշն եւս կապակցեալ է այս դրամատան հետ։ Այս դրամատուն Արժանթինի Հանրապետութեան մէջ հողեր գնելու համար մեծ դրամներ տրուած էր, և այն կողմէ իւր գոյքը շարժական վիճակի մէջ չունենալով և միւս կողմէ վճարումներ ընելու հարկին մէջ գտնուելով, ներկած է։ Անգլիական Պանքան որ չէր կրնար թոյլ տար որ այսպիսի մեծ տուն մը սնանկութեան զոհ երթար, անոր օգնութեան փութաց՝ հինգ միլիոն անգլիական ոսկւոյ գումար մը դնելով Պէրլինկեան Եղբարց տրամադրութեան ներքեւ, յերաշխաւորութիւն առնելով այն դրամատան գոյքն, և բաց աստի, Լոնտոնեան դրամատանց ոմանց խոստումներն, որք յանձն առին վնասին մասնակից լինել, եթէ Պէրլինկեան դրամատունն իւր յանձնառութիւնն չկարենայ կատարել, այսինքն՝ եթէ ամբողջովին չվճարէ Անգլիոյ Պանքայէն ընդունած դրամական օգնութիւնը։ Այս հզօր օգնութեան լրոյն վրայ, Պէրլինկեան դրամատան տագնապը վախցուածին չափ դէշ տպաւորութիւն չբերաւ Սակարաններուն մէջ։ Անգլիոյ Պանքայէն օգնութիւն ընդունող հաստատութիւն մը կորսուած չի կրնար համարուիլ։ Բայց այսպիսի դրամական օգնութիւն մը յանձն առնելով, Անգլիոյ Պանքան իւր տոկոսի գեղջն 5%էն 6%ի բարձրացուց։ Փարիզի Սակարանաց մէջ զգալի եղած յոռի տպաւորութեան բերմամբ, Օսմանեան թուղթերն ի Փարիզ իջան նոյն գներու որով կը բռնուին Լոնտոնի մէջ, մինչ յառաջ աւելի բարձր էին ի Փարիզ քան ի Լոնտոն։ Լոնտոնի հրապարակին վրայ ուրիշ տագնապէ չի վախցուիր, թէեւ վերջին օրերս կրած կորուստներուն պատճառ Լոնտոնեան հրապարակը տրկար կը գտնուի։

* *

Լոնտոնի սեղանաւորական տագնապին մէկ հետեւանքն այ այն եղաւ որ Անգլիոյ Պանքան 75 միլիոն ֆրանքի ոսկեդրամ՝ փոխ առաւ Ֆրանսայի Պանքայէն, 3% տոկոսով, երեք ամիսէն վճարելի։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Մեծ-Եպարքոսը շաբաթ օրն իւր քով կոչելով Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյն և Ունճեան Վսեմ. Աբիկ էֆէնտին՝ տեսակցութիւն մը ունեցաւ անոնց հետ և ինչ ինչ զեկոյցներ ընաւ, զորս Վսեմ. Սիմոն պէյ և Աբիկ էֆէնտի նոյն օրն իսկ Մաքրիգիւղ երթալով, հաղորդեցին Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարքին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱՒԱՆՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆԷ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆԱՆՔ

Սինոպի կառավարիչ անուանեցաւ Տէտէ փաշա, Նախորդ կառավարիչ Մարաշի։

— —

Սանիէյի երկրորդ ոստիճան տրուեցաւ Ներքին գործոց Նախարարութեան թղթակցութեանց գիւանի քարտուղարներէն Մէհմէտ Ֆուատ ու Նիզամէտտին պէյերու։

Սալիսէի ոստիճան՝ Սեբաստիոյ Նահանգին Մարզուան գաւառակին թաղապետութեան Նախագահ Ղալիպ էֆէնտիի։

— —

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Տպագրական Տեսչութեան ընդհանուր քարտուղար և թուրք լրագրոց դրաքննիչ Հրֆիզի պէյի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Ներքին գործոց Նախարարութեան թղթակցութեանց գիւանի քարտուղարներէն Ալի Ֆուատ պէյի և նոյն Նախարարութեան գիւանատան դեր-տնօրէն Ռիֆաթ Պէյի։

— —

Ի Բ. ԴՈՒՌՆ

Քաղաքապետ Բրսլան պէյ երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Ներքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

—Սպանիական, ռուսական, շուէտական, հոլանտական ու պարսկական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

— —

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Ըստ տեղեկութեանց Պէյրութի՝ Երուսաղեմայ Յունաց Պատրիարքարանի ժողովը, տեղւոյն Պատրիարք ընտրած է Անտիոքի Պատրիարք Տ. Երասիմոսը։

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Միջնորդներու (Տէալ-ը) յատուկ կանոնագրոյն Կրդ յօդուածին վրայ հետեւեալ յաւելուածն եղած և վաւերացած է կայսերական։

Առանց վկայական ունենալու միջնորդութիւն ընող անձինք երբ միջնորդչէքի առթիւ դատ մը ունենան վաճառականաց ու այլոց հետ, դատարանք նկատողութեան չպիտի առնուն այդ կարգի դատերը։

— —

ԲԱՐՁՐ. ՄԵԾ-ԵՊԱՐՔՈՍԸ

Մեծ-Եպարքոս Բարձր. Քեամիլ փաշա անձնական տկարութեան պատճառաւ երէկ չկրցաւ Բ. Դուռն երթալ։

— —

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Առողջապահական վարչութիւնը երէկի թուականաւ հետեւեալ շրջաբերական հեռագիրն ուղղած է քարանթինայի կայարանաց։

Սուրիական Տրիպոլիսէն մինչև Մէքքան հաստատեալ քարանթինան հիւսիսային կողմէն մինչև Սէլէֆքէ գործադրելի է, Նոյեմբեր 4/16էն յետոյ մեկնող նաւերուն համար։

Ընդհանուր Քնչ.
ՏՐ. ՔՕԶՕՆԻ

* *

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, Նոյեմբեր 3ին Հալէպի մէջ հնտախտի 5 մահեր պատահած են և կին՝ 4։ Նոյեմբեր 1ին՝ Պիրէճիկի մէջ 1, 1ին ու 2ին՝ Քիլիսի մէջ՝ 8, Մարաշի մէջ՝ 2։ Նոյեմբեր 3ին՝ Մարաշի մէջ՝ 6, 1ին, 2ին ու 3ին՝ Այնթապի մէջ՝ 5, 1ին՝ Ուրֆայի մէջ՝ 1, 2ին, Համայի մէջ՝ 2 և Հոմսի մէջ՝ 23։

—Ինչպէս կերեւի Առողջապահական Վարչութեան յայտարարութենէն Մէրսինի մէջ եւս հնտախտ երեւան եկած է։

—Լիբանու կառավարչէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ գաւառին ամեն կողմերու առողջական վիճակը գոհացուցիչ է և թէ հնտախտի որ և է դէպք չէ պատահած։

—Կայս. հրամանաւ Գուլէլիի հիւանդանոցին առաջին բժիշկ գնդապետ Սթրալիի պէյ և Զմիւռնիոյ զինուորական բժիշկներէն գնդապետ Իսաք պէյ Հալէպ պիտի երթան Հալէպի ու շրջակայից մէջ եղած հնտախտի ճարակումն արգիլելու մասին հարկ եղած միջոցները ձեռք առնելու համար։

— —

ՕՍՄԱՆԵԱՆ ՁՈՐԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Վեհ. Սուլթանին հրամանաւ յանձնաժողով մը կազմուած է պաշտօն ունենալով խորհրդակցիլ այն միջոցներուն վրայ, որովք կարելի է պատերազմի ժամանակ օսմանեան սահմանագլխին վրայ հաւաքելի զօրքերը փութով, կանոնաւորապէս և անդորրութեամբ փոխադրել։ Յանձնաժողովը միանգամայն այդ մասին կանոնագիր մը պիտի պատրաստէ։

Սոյն յանձնաժողովին, որոյ նախագահ կարգուած է սպայակոյտի նախագահի փոխանորդ Ֆէրիզ Լ-տհէմ փաշա, կը կազմեն սպայակոյտի դեր-նախագահ Ֆոն Տէր Կոլց փաշա, Հանրօգուտ շինութեանց նախարարութեան երկաթուղեաց տնօրէն Խայրի պէյ, բարձրաստիճան սպայք և Բուժելիի ու Անատօլուի երկաթուղեաց ընկերութեան պաշտօնեայք ոմանք։

Այս յանձնաժողով երէկ առաջին անգամ ըլլալով ի Նիստ գումարեցաւ Սպարապետի Դրան ընդհանուր սպայակոյտի ճիւղին մէջ։

— —

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կայս. կառավարութիւնը պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու ապագային մէջ ըրաց հանդերձեղինաց համար պէտք եղած չուխան տեղական գործարաններուն պատրաստել տալու համար։ Ի սկզբան մեծամեծ զոհողութիւններ պիտի ըլլան, վասն զի պատրաստուելիք չուխան սուղ պիտի ըլլայ բաղդատմամբ Եւրոպոյ մէջ պատրաստուածներուն, սակայն քայլ առ քայլ յառաջդիմութեամբ՝ օրին մէկը Թուրքիոյ գործարանք պիտի կրնան բաւել երկրին պիտոյից։ Օսմ. առեւտրական տուն մը արդէն իսկ երեք հարիւր հազար օխա բուրդ հայթայթած է պետական գործարանաց և կառավարութիւն ամեն հնարաւոր միջոցներով պիտի քաջալերէ անհատական արուեստագործութիւնը։ Յատուկ պաշտօնեայներ պիտի ղրկուին ի գաւառս՝ տեղացի արուեստագործները պատրաստելու համար գործարանաց ընդարձակման։

Այս օգտաշատ ծրագրոյ նախաձեռնութիւնը կը պատկանի եւմտական նախարար Վսեմ. Յակոբ փաշային, որ անոր գործադրութեան կ'աշխատի եռանդեամբ։

— —

ՍԵԼԱՆԻԿ

Եւրոպոյ մէջ դրամատեարց խումբ մը կազմուելու վրայ է, նոր յատակաձեւի մը համաձայն վերաշինելու համար Սելանիկ քաղաքը։ Այդ ընկերութիւն հարկ եղած դրամը փոխ պիտի տայ եղեր կայուածատեարց, յառաջիկային մէջ կայուածոց հասոյթներէն գանձելու պայմանաւ։ Միւնոյն ընկերութիւնը պիտի շինէ նաև քարափներ և Վարտար գետին եզերքը թուփերը պիտի կառուցանէ։ Այս գաղափար ծնունդ առած է Վիէննայի մէջ և դրամատեարց մեծագոյն մասը աւստրիացի ու գերմանացի են։

— —

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄՈՒՆՔ

Ներքին գործոց Նախարարութիւնը հրահանգ ուղղելով որոց որ անկ է, ծանուցած է թէ Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ ու Սկիւտարի թատրոններու մէջ ներկայացուելիք խաղերն, յետ քննութեան արտօնուելէ յետոյ միայն ներկայացուին, ըստ որում այդ խաղերը պէտք է հանրութեան բարոյականը կրթելու միայն ծառայեն։

— —

ԲԱԹԱՆԹԻ ՏՈՒՐՔԸ

Յայտնի է թէ բոլոր կառավարութիւնք իրենց հաւանութիւնը յայտնած են ի մասին Բաթանթի տրոց գանձման։ Արդ, յատկապէս կազմեալ յանձնաժողովին կողմէ պատրաստուած տեղեկագիրը յանձնուած է Արտաքին գործոց Նախարարութեան, որ ի մօտոյ Բարձր. Մեծ-Եպարքոսին պիտի հաղորդէ զայն։

— —

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Յայտնի է թէ Պ. Նակէլմաքէրս մեծանշնորհ խնդրած էր Մուտանիա-Պրուսայի երկաթուղւոյ գիծը մինչեւ Գոնեա երկարելու համար և թէ Պ. Վիժիէ ևս առաջարկեալ պայմաններու նկատմամբ ինչ ինչ բարեփոխութիւններ ընելով միևնոյն մեծանշնորհը խնդրած էր։

Արդ, սպայակոյտի Ֆէրիզ Նէճիպ փաշա և Պ. Բուլա ևս, առանձինն զեկուցագրեր մատուցանելով Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան, միեւնոյն նպատակաւ մեծանշնորհ խնդրած են։

— —

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ըստ տեղեկութեանց Մէնէմէնի, այն յանձնաժողովն որ վերջերս կազմուած էր քննելու համար թէ օսմ. հանրային պարտուց վարչութեան ծախքերը մինչեւ ո՞ր աստիճան կը համապատասխանեն իւր հասոյթից, յետ հասուն քննութեան սա եզրակացութեան յանգեր է թէ այդ ծախքերը կրնան մեծապէս զեղչուիլ, յօդուտ կառավարութեան և արժէտեարց։

— —

ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Կ'ըսուի թէ Պոլսոյ քարափանց շինութեան պայմանագիրն ու յանձնառագիրն երէկ պիտի ստորագրուէր ու փոխանակուէր Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան պաշտօնատան մէջ և թէ կայս. Ֆէրմանն ալ պիտի յանձնուէր։

Արտօնատէր Միշել փաշայի փոխանորդ Պ. Կանէ երէկ իրիկուն Փարիզ ուղեւորեցաւ, ուր Միշել փաշայի ինչպէս նաեւ մէկ քանի դրամատեարց հետ խորհրդակցելէ յետոյ մայրաքաղաքս պիտի դառնայ։

— —

ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՑՔ

Կայս. Իրատէ մը հրամայած է քննել թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառներու դատարանաց նախագահներուն, անդամոց եւ այլ դատական պաշտօնէից վիճակը, անկարողները պաշտօնանկ ընել և այդ կարգի պաշտօններու համար ուրիշներէն նախամեծար համարիլ Իրաւագիտական վարժարանի վկայեալ շրջանաւարտները։

Կայս. սոյն Իրատէին գործադրութեանը համար Դատական Վսեմ. Նախարարին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է, որ կը բաղկանայ նոյն Նախարարութեան մէկ քանի բարձրաստիճան պաշտօնեայներէն։

— —

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԱՅՐԱՏ ԹԱՂԵՐՈՒ

Հրամանաւ Վեհ. Սուլթանին՝ միջոցներ ձեռք պիտի առնուին դրամագլուխ մը կազմելու համար, որ պիտի յատկացուի Կ. Պոլսոյ հրկիզեալ թաղերու վերաշինութեան։ Այդ շինութիւնք պիտի կատարուին այնպիսի եղանակաւ մը որ նոր թաղերն ըստ կարելւոյն զերծ մնան աւերիչ տարրէն։ Յատուկ յանձնաժողովներ կազմուած են պաշտօն ունենալով վերաքննել շէնքերու կանոնագիրն ու դրամական խնդիրներով զբաղիլ։ Այս նպատակաւ ծրագրեր կը պատրաստուին ի Բ. Դուռն և ի մօտոյ կայսերական վաւերացման պիտի մատուցուին։

— —

Կայս. Թանգարանին հանդէպ շինուած նոր շէնքի բացումը տեղի պիտի ունենայ ի մօտոյ։ Սայտայի մէջ գտնուած հնութիւնք այդ շէնքին մէջ պիտի փոխադրուին։

—Այս օրերս Այտընի նահանգին մեծ մասին մէջ առատ անձրեւներ տեղացած են ի մեծ գոհունակութիւն երկրագործ դասուն։

—Գաղթականաց վարչութիւնն երէկ բուժելիցի 186 գաղթականներ Պրուսայի նահանգը ղրկեց, անդ բնակութիւն հաստատելու համար։

—Եղեռնագատ ատեանն երէկ հինգշաբաթի տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց Ահմէտ ու Սիւլէյման անուն երիտ. չարագործներ, որք փողոցի մը մէջ Բիֆաթ էֆէնտի անուն կառավարական պաշտօնէի մը վրայ յարձակելով դրամն՝ ու գոյքերը յափշտակած էին։

—Կարնոյ անգլ. հիւպատոս Պ. Ռիֆֆորտ—Լոյտի հետ մայրաքաղաքս եկած է նաեւ տեղւոյն պարսկական հիւպատոս Միրզա Ալի խան։

—Սելանիկէն առնուած լրոց նայելով, նահանգին այլ և այլ կողմերը կատղած գայլեր մէկ քանի հոգիներ խածատեր են դարձեալ։

—Քաղաքապետ Բրսլան պէյ չարաթ օրը Սկիւտար երթալով Թօփ Թաշիի յիմարանոցը այցելեց ու մանրամասնաբար աչքէ անցուց այդ բարեգործական հաստատութեան ներքին կազմակերպութիւնը։ Ն. Վսեմութիւն գոհունակութիւն յայտնեց և այս այցելութեամբ ուզեց գիտնալ միանգամայն թէ ինչ ընել պէտք է Եւրոպիոյ յիմարանոցներուն համանման հաստատութիւն մը հիմնելու համար։

—Ռումանական կառավարութիւնն արտօնութիւն ստացած էր կայս. կառավարութենէն որպէս զի ռումանական էնէրդէֆ շոգենաւը Նորոգուի արքունի Նաւարանին մէջ։ Արդ, այդ շոգենաւ, որ շաբաթ մը առաջ կալայցէն ճամբայ ելած է Կ. Պոլիս գալու համար, մինչեւ երէկ աստ ժամանած չէր և ռումանական դեսպանատունն ալ տեղեկութիւն չ'ունի թէ այդ շոգենաւ ուր կը գտնուի, որով կը կարծուի թէ արկած մը պատահած ըլլայ։

—Անգլիական շոգենաւ մը Լիվրուլէն ճամբայ ելած է մայրաքաղաքս բերելու 380 տակառաչափ այլ և այլ նիւթեր, որք կը վերաբերին ի Պէյքօզ կառուցելու վրայ եղող Համիտիյէ թաղի գործարանին շինութեան։

—Երէկ Վառնայէն ու Կալայցէն մայրաքաղաքս եկան 83 տնուոր ռումէլիցի գաղթականներ, որք մէկ քանի օր մայրաքաղաքս մնալէ յետոյ իրենց համար որոշեալ գաւառները պիտի ղրկուին։

—Ֆրանսական կառավարութիւնը Մէ-ռէն Ակ-էէլի պատուանշանը նուիրած է երկրագործական տնօրէն Նուրի պէյի։

—Առևտրական և Հանրօգուտ շինութեանց պաշտօնատան ետեւը գտնուած պարտէզին մէջ շէնք մը պիտի կառուցուի երկրագործական Դրամատան համար, որ բովէտեւ այդ Դրամատան պաշտօնէից համար, որք ցարդ Նաֆիաթ պաշտօնատան մէջ կը գտնուին, բաւական սենեակներ չկան։

—Ըստ նորագոյն տեղեկութեանց, Աէլանիկի ու Սթրումցայի միջեւ պատահած երկաթուղւոյ արկածի պահուն 42 մարդեր մեռած և 40 մարդեր ալ վիրաւորուած են։

—Ոստիկանութեան պաշտօնեայք երէկ մէկ քանի մարդեր ձերբակալեցին, որք Գարաքէօյի կամուրջին կղզիներու շոգենաւներուն յատուկ մասին վրայ գտնուած սրճարանին մէջ խաղամոլութեամբ կ'զբաղէին։

—Մախսուսէի Ռ-ը-ը շոգենաւն երէկ մայրաքաղաքս բերաւ չորս հարիւրէ աւելի նոր գինուորներ, զորս Սեւ ծովու ասիական ծովեզերեայ քաղաքներէն առած էր։

—Դամասկոսէն կը գրեն թէ տեղւոյն հեռագրատան պաշտօնեայներէն Էսատ Էֆէնտի անձնասպան եղած է րեվոլվերի հարուածով մը։

—Բերայի ամենէն նեղ մասը, որ կը գտնուի ռուսական հիւպատոսարանին ու Գումպարի էֆէնտիի տան միջեւ, ի մօտոյ պիտի ընդարձակուի, երկուստեք գոյացեալ համաձայնութեամբ մը զոր գիւրացուցած է թագաւորական նախագահ Վսեմ. Մահիր պէյ։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՑԻ

Ֆրանսական խումբն այս գիշեր պիտի ներկայացնէ։

ԼԷ ԶԼՈԾ ՏԸ ԿՕՐՆԸՎԻԼ
LES CLOCHES DE CORNEVILLE

յորում ժէրմէնի դերը պիտի կատարէ օրիորդ Պէյնաթի։

ԱԶԳ

Բամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ դպրաց սեպհականեալ վաղջիներէն հեռաւեալները մանրելու եղած ըլլալուն ըստ օրինի ամուրդ հանուած են. Ծախու առնելու փափաքողք առաւօտները ժամը 3ին Սամանթիայ ի Նուռեան վարժարան ընկերութեան սենեակը բարեհաճին դիմել։

Ա. Թոփքաբու Պայազիտ Աղա փողոց թիւ 5 մէկ փայտաշէն ամբողջ տուն մը, և Ներքնը եղող թիւ 7 մէկ գիմեան ամբողջ միւրը կը վաճառուի։

Բ. Սամանթիայ Սբոյ Զէյէպի փողոց ոսկերչի միւնեանի խաչատուր աղայի կին ուիկին Մարգրիտի մէկ քարուկիր տունն, իւր մահուանէ յետոյ երեք զաւակացը ժառանգ մնալով, որոց մին անպատակ մեռած ըլլալուն առթիւ յիշեալ տան երեք բաժնին մէկ բաժինը կը վաճառուի։

Յիշեալ վաճառմունք թուականէս վաթսուն և մէկ օր միջոցի մէջ պիտի լրանան։ 9—15
18 Հոկտ. 90 186

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

Ընդէր Գլուխոյ

Ազգային եւ Օտար Մատենագրաց

(Արժէք և Ոտանաւոր)

Սոյն ընտիր գործն ցարդ հրատարակուած հաւաքածոյներու մէջ առաջին տեղը կը բռնէ, ուստի ճոխ պարունակութիւն մի ընտիր դասակարգութեամբ՝ շահագրգիռ և հետաքրքրական ուսումնասիրաց համար։ Երկասիրողն Եւրոպայի մեծ հեղինակաց հետեւողութեամբ յաջողած է լուսաւորն մեթոտով մի առաջնորդիչ զաւակերտս յուսումն աշխարհիկ լեզուի։

ՀԱՒԱՔԱԾՈՅ՝ն կը բաղկանայ երկու մասէ։ Ա. մասին մէջ կը բովանդակին գեղեցիկ հատուածներ, պատմական և նկարագրական գրուածներ, առակներ, և ն. Դիմեն է 3 դասնկան; իսկ Բ. մասին մէջ՝ որ առաջնոյն լրիմն է ու մեծագիր, կը պարունակէ մեծ մասամբ անտիպ գրուածներ, գրագիտական գլխաւոր կանոններ, 35 Հայ հեղինակաց հակիրճ կենսագրութիւններն, առածներ, բարոյական իմաստներ, բառագիտական ծանօթութիւններ և ն. Գիրքն 7 ուկէս գրասկան։ Կը ծախուի ամէն Հայ գրավաճառաց քով։

Սոյն գործոյն կեղծ օրինակներէն զգուշանալու համար բաւ է միայն կարդալ գրքին ճակատն ԱԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ։ 163

ԱԶԳ

Երկար տարիներ մայրաքաղաքս և գաւառներն ուսուցչական պաշտօն վարած և պատուաւորապէս վկայեալ անձ մը պատրաստ է Հայ. և Ֆրանսերէն լեզուաց ուսուցչութիւնն ստանձնել ի մայրաքաղաքիս կամ գաւառներէն միոյն մէջ, գոհացուցիչ պայմաններով։

Պէտք ունեցողները կրնան Աբեւելքի խմբագրատունէն տեղեկութիւն ստանալ։

ՀԵՌԱԴԻՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՏՔԹ. ՔՈԽԻ ԳԻՒՏԸ

ՊԵՐԼԻՆ, 17 Նոյմ.—Տքթ. Լէվի երէկ Պերլինի և Վիեննայի երեւելի բժիշկներէն և գերմանական Համալսարանաց ներկայացուցիչներէն և օտարազգի գիտնականներէն բաղկացեալ նշանաւոր բազմութեան մը ներկայացուց հիւծախտէ բռնուող բոլոր հիւանդներն որք Տքթ. Քոխի գրութեամբ աղէկցած են։ Զեռք բերուած արդիւնքները զարմանալի են։

ՎԻԵՆՆԱ, 17.—Առողջապահական բարձրագոյն խորհուրդը Ներքին գործոց Նախարարէն խնդրեց ամեն միջոցներ ձեռք առնուլ Տքթ. Քոխի պատուաստը միայն պետական հաստատութեանց մէջ չինել տալու համար։

ՓԵԹԵՐՍԲՈՒՐԳ, 17. — «Սակարանի լրագիրը» կը ծանուցանէ թէ Անգլիոյ Պանքան Կայսերական Պանքային հետ կը բանակցի մէկ ու կէս միլիոն անգլ. ոսկւոյ փոխառութեան համար։

ՀՌՈՄ, 17.—Ռիֆորմա նախարարական թերթը կը հերքէ այն լուր թէ Պ. Պ. Քրիսպիի և Քափրիվիի միջեւ համաձայնութիւն մը կնքուեր է Մաք Քինլիի մաքսային օրէնքին դէմ միջազգային դաշնակցութեան մը հաստատման համար։

ՊՈՒԿԲԻՇԹ, 17.—Գահաժառանգը Պերլին գնաց Ներկայ գտնուելու Վիքթորիա իշխանուհւոյն ամուսնութեան։

—Ընտրական առաջին շրջանակի քաղաքային ընտրութիւնք պահպանողական կուսակցութեան փայլուն յաղթանակով վերջացան։ Ազատականք կորուսին գրեթէ ամեն քաղաքները, բաց ի չորսէ։ Պուքրէշի մէջ այս ընտրական յաղթանակին հռչակումը ժողովրդային մեծ խանդավառութիւն յառաջ բերաւ։ Նախարարապետին տան առջեւ եռանդեալից ցոյց մ'եղաւ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 6 Նոյմ.

Օսմանեան Քաղաքագիտ		
Դրէկ երեկոյ գոց՝ Մէջտ. Ս. Սերբ	19	18
Ալեքսանդրիայ գոց	19	22
[illegible]	19	22½
Թանգիլաթը Օսմանիէ երէկ երեկոյ	78	7
» » ժամ 5ին	78	19
ՕՏԱՐԱՑ ԱՐԺԵՔՆԵՐ		
Ֆ. Հանգանակ Ա. Սերբ	40	
» Տ. »	21	13/16
» Գ. »	19	22
ԹՈՒՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ		
Ցանկերէ դէնէրալ Ռնոյ. Լ.	4	35
Քրէտիթ դէնէրալ Օսմ. »	9	18
Գանք տը Գոնս » »	6	26
Ոսս. Շահմ եվրէօք » »	4	32
Թրամուէյ » »	535	
Բան մէյլի նեղանոցի Ֆր.	76	3/8
Սամանդրա [illegible] Գ. Ե.	145	
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՎ		
Օսմանեան ոսկի ղրշ.	100	
20 ֆրանկանոց »	87	4
Անգլիական ոսկի »	109	32
Մարք (գերմանական ոսկի) »	106	30
Իմպերիալ »	91	20
Քրիմիզ »	51	12
Բանգի թիւրքիա »	7	65
Մէճ. արծաթ (տարբ.) »	107	28
Վենետիկ »	102	30
Լինիոնայ »	102	20
Մէթալիզ »	100	
Թաուֆիկի »	—	—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 17 Նոյեմբեր, ժամ 4 վայր. 40 երեկոյ

Դրամատան Լուանթի 3 %	91	35
» » 4½ %	104	87½
Օսմանեան ղամաշիրէ Սերբ Դ.	17	90
Օսմանեան երկաթուղի	75	50
» Բեմիթի բաժնեթուղթ	303	75
Պանք Օթոման	591	25
Գրեսիտ Լիոնէ	787	50
Իտալական Լուանթի 5 %	92	95
Հելլենական 5 %	462	50
Բրազիլիէ թիւրք (1890)	400	
Եգիպտական միացեալ	479	37½
Պանք տը Բարի	825	
Օսմ. մաքս. արժէթուղ

Օսմանեան երկաթուղի	77 50
Օսմանեան քոնսոլիտե Ութի Դ.	17 80

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 17 Նոյմ. ժ. — ժ. — երեկոյ

Ֆրանսական Իսանթ 3 %	94 60
Օսմանեան քոնսոլիտե Դ.	18 15
Օսմանեան երկաթուղի	75 50
Օսմ. Բեմի	303 75
Բրիտանական Թուրք	401
Օսմ. Մաքս. արժէթուղթ	450
Պանք Օթոման	601 25
Ռիո Թինթո	582 50

ԼԱ ԹՐԱՎԻԱԹԱ

Շաբաթ երեկոյ՝ Պ. Սալայի Նորեկ խումբը ներկայացուց Վէրտիի այս սրտաշարժ նուագախաղը։ Ալեքսանդր Տիւմայի որդւոյն վէպը, նորա վրայ երկասիրած թատերգութիւնը և Վէրտիի յօրինած եղանակները մեծապէս կը յուզեն հանդիսականաց սիրտը։ Անկարելի է անթաց աչօք ընթեռնուլ այդ վէպը կամ հանդիսատես լինել թատերգութեանը ներկայացման։ Վասն զի Ալեքսանդր Տիւմա դրուագեր է այնպիսի մի վիշտ մարդկային կենաց՝ որ յար կրկնուած է ցարդ և որ մերթ ընդ մերթ տեղի կունենայ որ և իցէ յարկաց ներքեւ։

Երիտասարդ էլի երբ Լ. Տ-մ. Ք-ռելանուն մատեանը ձեռքս ինկաւ, սկսայ ընթեռնուլ իբր սովորական մի վէպ, բայց հազիւ մի քանի էջ տեսեր էի և ահա իսկոյն իմացայ թէ հեղինակն արտասովոր պատմութիւն մի կը ներկայէ ընթերցողին։ Ժիւլ ժանէնի պերճախօս յառաջաբանն էր որ կը զեկուցանէր զայն։ քանի կը յառաջանայի, այնքան հետաքրքրութիւնս կը շարժէր, բայց երբ հասայ մատենին այն մասերը յորս Գ-ռէ-ղ-ը-ը Տէ-կէր-ը, հէք Մարգարիտա, Նիհար, հիւծեալ, և սիրաբորբոք յուսակտուր անկեալ էր ի մահիճն և կրգոյր մահուան հսկայաքայլ մերձենալը, ու անտարբերութիւնն այն մարդոց որ յառողջութեանն՝ կը թռչտէին շուրջը՝ նման մեզուաց՝ իրմէ քաղելու համար գարնանային անուշահոտ հիւթեր, երբ ընթերցայ Մարգարիտայի սրտաճմիկ յիշատակարանը՝ զոր գրեր էր վասն պաշտելի հոմանւոյն՝ որ կը դեգերէր յուսահատ՝ հեռաւոր ափանց վրայ, ո՜հ, յայնժամ կըզգայի թէ սիրտս կը կեղեքէին ուժգին։ չէի ճանչեր զաչխարհ, անիրաւ էի ամենայնի, սակայն համայնից պէս սիրտս ընդունակ էր վշտի ու լացի՝ դառնապէս մարդկային կենաց մի վէպի երեւակայական պատկերին առջեւ։ քանի՜ցս մատեանը ինկաւ ձեռքէս, քանի՜ցս զըղջացի զայն կարդալուս վրայ, այլ ի զուր, լացի և կը շարունակէի լափել այդ հոգեյոյզ էջերը։

Մտադրեցի յայնժամ հայերէն թարգմանել զայդ երկարասրութիւն։ Եռանդով կատարեցի առաջադրութիւնս և մատուցի թարգմանութիւնս ի քննութիւն Տիկին Բ...ի, զոր յայնժամ յոյժ կը պատուէին հայ գրագէտք։ Այն ազնիւ տիկինն ալ շատ լացեր էր, և կը թուի թէ արտասուք թոյլ չէին տուած իրեն՝ խնդրեալ քննութիւնն ընելու, մի բառ միայն փոխել տուաւ, բառ որ անարգանք էր դիւցազնուհւոյն և ընդհանուր գեղեցիկ սեռի,—որպէս կ'ըսեն արդ հայ նոբաստէրք։ Թարգմանութիւնս հրատարակուեցաւ՝ լեզուի և ոճոյ թերութեամբ որք հետեւանք էին անփորձ համբակութեանս։ բայց կը մխիթարուիմ խորհելով թէ երկասիրութիւնս ախորժելի եղաւ բազմաց և թէ, գուցէ, բարւոքեց երիտասարդաց ոմանց զգացմունքը։ Անցինք արդ վէպին կամ նուագախաղին որ գրեթէ նոյն է։

Կին մը, գեղանի՝ հարուստ՝ անհոգ՝ զուարթ՝ չուայլ կին մը, Ժիրդ։ դարու Մագթաղեցի մը, որ արագ արագ կը քամէ կենաց բաժակը, զի գիտէ թէ մահն ընդհուպ պիտի յարձակէ զինքն։ Ուստի՞ գայ այդ կին, ո՞վ գիտէ երբէք ուստի գան այդպիսիք, կը փայլին յանկարծ և կ'աներեւութանա՝ ասուպի նըման։ Անցեալը մի՛ հարցունէք։ Ներկայն պէտք է ագոնց, իսկ ապագային վրայ չեն խորհիր։ Այն կինը երբէք չէ սիրած։ սակայն օր մը կը սիրէ։ անհաւատ էր, և ահա հաւատացեալ կը լինի։ հոգին կը զարթնու, երկրէս կը բարձրանայ։ այնպիսի վսեմ խորհուրդներ, այնպիսի մարդասիրական զգացումներ կ'իմանայ որոց յինքն գոյութեան տեղեակ չէր, սէրը կը լինի իրեն համար իբր երկրորդ մկրտութիւն։ կեանքը, որ իրեն համար տաղտուկ էր, պիտայք մը կը դառնայ, զի նոբանոր եւ ազնիւ վայելքներ կը պարզին իւր առջեւ։ Աստուած, ողորմած Աստուած, թոյլ մի՛ տար որ մեռնիմ։ այն ինչ բացի աշքս, այն ինչ սկսայ վայելել նոր և ինձ անծանօթ կեանքը, մի՛ փակեր աշերս, մի փչրեր զիս։» Այսպէ՛ս կը խորհի հէք կինը զԱրման (նուագախաղին մէջ Ռ-ոլ-ի) սիրելէն յետոյ։ Մարգարիտա (Վ-ա-ղ-ը-ը) հրաժեշտ կուտայ Փարիզու աղմկալից կենցաղավարութեան ու հմանուոյն հետ կ'երթայ կ'առանձնանայ մի խորհրդաւոր գիւղի մէջ։ կ'անցնին ամիսներ, չ'են անցնիր, կը սահին՝ սիրաբորբոք տարիածուներու համար, ապագային նկատմամբ նոր նոր առաջադրութիւններ կ'ընեն։ իւրեանց ապառնի բարեբաստութեան ծրագիրը կը գծեն։ և ահա սաստիկ փոթորիկ մը կ'եկնէ՝ յոր մռացեր էին խորհիլ ցարդ՝ իրենց արբեցութեան մէջ։ Արմանի հայրը՝ որ պատուոյ անձնաւորութիւն մ'է, վրայ կը հասնի։ չ'ուզեր զի վատ կին մը որ ընկերութիւններէ արտաքսեալ է՝ կենակից լինի որդւոյն։

Անգին կայ գեղեցիկ և հրեշտականման անմեղ աղջիկ մը, սրբուհի մը, իւր ազգիկը, Արմանին քոյրը, որ կը սիրէ, «բայց ոչ որպէս դու կը սիրես՝ սնանկացուցեալով զաւակս և վատթարացուցեալով զնա. աղջկանս սէրը սուրբ է, յարմար այն սիրոյն զոր Տէրն մեր հրամայեց, Աչէրտէ ղմիտա։ եթէ իրարմէ չզատուիք, աղջիկս պիտի չկրնայ ամուսնանալ, զի Նորա խօսեցեալին ընտանիքը՝ յոր ամէն ոք պատուաւոր է՝ կը պահանջէ զի իմ ընտանեացս մէջ ևս այդպէս ըլլայ։» Այսպէս կը գոռար զայրացած հայրը, այս խօսքերը կը թելադրէին իրեն՝ իւր որդեսէր զգացմունքը և յիշատակն անարատ կենաց զոր վարեր էր ցարդ։

Գոգցես կայծակնահար՝ Մարգարիտա չէր կրնար հաւատալ այս տառապանաց, զոր չէր կրցեր դուշակել՝ բարեբաստութեան երազներուն մէջ։ «Ո՛չ, չեմ կարող լքանել զորդիդ։ այն կեանք է ինձ համար, Նորա սէրը մաքրեց զիս։ եթէ լքանեմ՝ կը թաւալիմ դարձեալ այն գարշելի վիհին մէջ՝ ուստի քարշեց զիս նա, և ուր ընդհուպ կը մեռնիմ։» — «Ինքնամոլութեամբ ինքզինքդ կը մոռանես, մինչդեռ անդին անմեղ կոյս մը արտասուաթոր աչօք կը սպասէ զի մի խօսքով բաղդն որոշես։» Մարգարիտա կը զգածուի։ սէրը վսեմացուցեր էր զինքը։ կ'իմանայ թէ իրեն համար ապագայ չկայ։ անցուցած կեանքը դատապարտեր էր զինքը, եւ թէ պէտք էր մեռնիլ՝ բայց մեհանձն գործով որ լիներ իրեն համար քաւութիւն։ «Կը հաւատա՞ք թէ յանշափս և անշահասիրութեամբ սիրեցի ձեր որդին։ կը հաւատա՞ք թէ այս սէրն ինձ համար էր քաւութիւն մեղացս» «Այո։»—Ուրեմն համբուրեցէք զիս որպէս թէ համբուրէիք ձեր դուստրը։ Քանի եւ շորս ժամ չանցած ձեր որդին պիտի վերադառնայ առ ձեզ։ բայց պիտի ատէ զիս...։—«Ո՜ ազնիւ տիկին, պիտի ըսեմ աղջկանս թէ անծանօթ բարերարին համար աղօթէ։»

Տեսէք, սէրն այնքան ազնուացուց զՄարգարիտա, այն խառնակեաց կինը, զի անրիծ մի աղջկան, պատուաւոր մի հօր երախտագիտութեան կ'արժանանայ։ Մարգարիտա առաւել եւս սրբացաւ և Աստուած պիտի ներէ իրեն ոչ միայն անցեալն այլ ապառնի մեղացն համար ոյք այսուհետեւ տանջանք են իրեն համար և ոչ վայելք։

Երբ Վէրտէ-ի սրտաճմիկ ձայնով կ'երգէր հոմանւոյն հօրը դէմ, մինչ սա գեղեցիկ և դերին յարմար ձայնով կը պատասխանէր, կ'ըսէի «իրաւունք ունիս Վէրտէ-։ բաժնուիլ այն անձէ զոր յոյժ սիրեմք՝ մահ է, իրաւունք ունիս ծերունի հայր, զի չես կրնար դստերդ ապագայն զոհել, դու որ պատրաստ ես ինքզինքդ զոհելու Նորա համար։ Բայց կան դժբաղդաբար մարդկային ընկերութեանց մէջ, որոց չատը գուցէ անկարող են մեղաւորը քարկոծել, կան, կ'ըսեմ, այնպիսի նախապաշարմունքներ որոց յանախ զգայուն մարդիկ զոհ են գացեր։ դու ալ Մարգարիտա, մատո՛ զանձդ յոյզիկդ, որպէս զի սնապարծ և անգութ ընկերութիւնը գոհացուցես ու յերկինս մի նաւատակ աւելի ըլլայ, ճշմարտութեան եւ սիրոյ նահատակ։» Եւ այդպէս ալ կը լինի։ մի քանի ամիս յետոյ Մարգարիտա, որոյ հիւանդութիւնը մեղմած էր կանոնաւոր և հանգարտ կենցաղավարութեամբ, դարձեալ կը զայրանայ՝ յուսահատական ու բուռն գեղծմամբք, կը մեռնի և մինչև յետին չուշն անդադար խորհելով ի նա որ ոչ ևս պիտի վերադառնայ, յայն բարեբաստիկ աւուրս զոր ոչ ևս պիտի վայելէ, յայն առողջութիւն ու գեղ որ աներեւութացան իսպառ, յայն գերեզման ուր ափ մի հող պիտի դառնայ, յերկինս որ դռները պիտի բանայ ընդունելու զինքն ոչ իբր զղջացեալ մեղաւոր, այլ իբր մի նահատակ թշուառ, որ մխիթարութիւնն է Աստուած որ ասաց «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ երանի՜ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին, երանի՜ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն, երանի՜ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն, երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։» Սգաւոր էր զի իւր օրհնաւոր և անմեղ երազները չկատարուեցան, զղջացեալ էր, և աչխարհ զլացաւ իրեն զարդարութիւն, ողորմեցաւ ինքն այլոց, այլ ո՛չ ոք ողորմեցաւ իրեն, յետ զղջման սիրտն սուրբ էր այլ ինքնամոլ ընկերութիւնն չծանեաւ զայն, խաղաղութիւն բերաւ վրդովեալ մի ընտանիքի մէջ, այլ ոչ ոք խորհեցաւ խաղաղեցուցեալ այն բուռն խռովութիւնն որք կը տառապեցուցանէին հէք կնոջ կեանքը։

Լ. Թ-վ-ռ-ի երաժշտութեան վրայ Գանվէրի ճոխ գորգով, Նիբալի ոսկեղէն և արծաթեղէն ամաններով, Տագգայի մետաքսեղէններով և Իրանու խնկեղէններով, և գնա յերկիրն Միգիլա, առ Նիմի, որդի Բաւագայի, հայր Բարաւատի մօրդ։ Նիմի ունի չորս դուստր որ իւր տան զարդերն են։

Նիմիի տունը ճաչելէդ վերջ՝ նոցա գեղեցկագոյնն ընտրէ քեզ կին և բեր այսր հօր հրամանաւ, որպէս զի սրբոտագինս օրհնեմ զերկուսանդ և զորդիս ձեր։ Վիւչականա ըսաւ։ Եթէ չորեքին հաւասար գեղեցիկ լինին, առաքինի և երկիւղած Աստուծոյ, կրնա՞մ զմին ընտրել՝ առանց միւսները վշտացնելու և գաղտնի լացնելու։ և չպիտի՞ ըսեն։ Էր այս մարդը մեր տունը վիշտ բերաւ։

Ցայնժամ Աճիկարտա ըսաւ։ առքառապատիկ ընծայ եւ տուր իւրաքանչիւրին, այսու չ'պիտի նախանձին միմեանց վերայ։

Բայց Վիւչականա ըսաւ։ Զո՞րն ընտրեմ։ Աճիկարտա պատասխանեց։ Տէրը պիտի ցուցնէ քեզ նշան մը։—Ով ոք գառաջինն զքեզ ողջունէ, դնա ընտրէ քեզ կին և անցուր նորա պարանոցն հարանախօսական նշանդ (Դ-ա)։

Այս վերջին խօսքերէն գոհանալով և խրախուսուելով՝ Վիւչականա առաւ զոյգ մի սպիտակ փիղ եւ զայն բեռնաւորեց ընծայներով և առնլով հօր օրհնութիւն՝ յուզի անկաւ ի Միգիլա։

Ցետ բազում աւուրց, Վիւչականա նշմարեց ցանկափակ ոռոգեալ ընդարձակ դաշտ մի։ Մօտեցաւ մըշակի մ'որ կ'աշխատէր երգելով, եւ հարցուց նմա՝ թէ որո՞մ է այս որիզի դաշտն։

Եւ մշակն՝ առանց իւր աշխատութենէն դադրելու՝ պատասխանեց։ Այս դաշտ կը պատկանի Բաւագայի որդւոյն, Նիմիի։

Ցետաւ ի հեռուստ երինջներու և ցլուց անթիւ երամներ, և մօտեցաւ

(1) Ըստ Ս. Գրոց Աբրահամու կոչեց զիւր ծառայն որ երթայ ի Միջագետս առնուլ անտի կին, իւր Իսահակ որդւոյն։

(2) Ըստ Ս. Գրոց՝ Ա՛ռ ծառայն տասն ուղտ յուղտուց տեառն իւրոյ և յամենայն բարութեանց տեառն իւրոյ ընդ իւր, և յարեաւ գնաց ի Միջագետս, ի քաղաքն Նաբովրայ։

հանդիսացնելով զայնս արուեստին ընծայած ամէն հնարքներով և նորասէր հանդիսատեսք կը շնորհեն նոցա զայն զոր սոքա չունին, հանճարը։

Իսկ Լ. Թ-վ-ռ-ի ներկայացման գալով, ներուի ինձ յայտարարել զի մասամբ իւիք գոհ եղայ։ Պարոն Կէլէն (Բոտոլֆի հայրը) Պ-ը-ր-ն-ի գեղեցիկ ձայն ունի։ կը գործածէ զայն իւր քաջ արուեստագէտ։ կը յուզէ զհանդիսականս՝ լաւ մեկնելով հեղինակին իմաստը։ դերին նրբութեանցը գիտակցութիւն ունի եւ լիովին կը յայտնէ զայնս։ յաւել այս յատկութեանց վրայ դերասանական արուեստը և կունենաս ախորժելի գուսան մի որ պատիւ կը բերէ պարոն Սալայի ճաշակին և ընտրութեան։

Օրիորդ տը Վիլբէրէ կը կատարէր Վէրտէ-ի դերը։ Մինչ մ'այս կինը ևս դըժբա՞խտ է եղած հէք Մարգարիտայի նման, չգիտեմ։ զայս միայն իմացայ թէ զգուշաւոր կենցաղավարութիւն մ'ունի, վասն այսորիկ, այն հանդիսատեսք, որք գուսանը կը նկատեն իբր առարկայ իւրեանց զբօսանաց (ընդհանրապէս ընկերութեան բարձրագոյն դասու պատկանող անձինք) չէին հաճեր գովել զայս քաջ երգիչը, բայց, շաբաթ երեկոյ, օթեակներէն դուրս գտնուող հանդիսատեսք, որք աւելի արդար դատաւոր են, յոյժ ծափահարեցին և յաճախակի կեցցէներով փառաւորեցին զՕր. տը Վիլբէրէ. սա կերգէր գեղտրիկ ձայնով, Ֆրանսայի երաժշտական դրութեան ոճով՝ որ զգացմանց դուզնաքեայ երանգներն իսկ զանց չըներ։ Զգայուն մի կին՝ տարաբախտ՝ մի կնոջ սէրն, վիշտերն ու յուսահատութիւնը կատարելապէս կը պարդէր և հանդիսականաց աչերը կը մթագնէին անդադար յորդառատ արտասուօք։ Բայց այս յուզմունք սրտի մուտք չունէին ի նոսա որ հաւատք չունին, հաւատք սիրոյ, քանզի նոցա համար սէրը՝ սովորական սակարկութեան արդիւնք է՝ զուրկ բոլորովին սրտի սրբագործութենէ։ Վասն այնորիկ շաբաթ երեկոյ տիկին տը Վիլբէրէ մեծ յաղթանակ տարաւ ի գոհունակութիւն այն ունկնդրաց որ ի թատրոն կ'երթան լոկ ներկայացմանց համար։

Ե. Վ. ԱՃԷՄԵԱՆ

ՌԵԲԵԿԱ. ՀՆԴԿԱՑ

(ՆԱԹԱԼԻԷԻ)

Աճիկարտա (Աբրահամ Հնդկաց) տեսնելով՝ թէ իւր մօրթը կը խորշոմի և հերք կ'սպիտականան և զգալով թէ հասած է այն վայրկեանն հեռանալու իւր որդիէն, խորհեցաւ իւր որդւոյն կին առնուլ, որպէս զի իւր սերունդը չմարի։

Աճիկարտա(1) առ ինքն կոչեց զիւր որդին և ըսաւ։ «Ահա հասեալ է իմ, որդեակս Վիւչականա, յերեկոյ կեանց իմոց, մայրդ կը ննջէ յաւիտենական քունով առ Տեառն արարածոց, և չիք կին մի որ հակէ մեր տան աշխատութեանց, ժամ է զի ընտրես քեզ կին։

Եւ Վիւչականա պատասխանեց։ Եղիցին կամք հօր իմոյ։

Աճիկարտա շարունակեց։ Առ(2) զոյգ մի փիղ սպիտակ, բեռնաւորէ Գանվէրի ճոխ գորգով, Նիբալի ոսկեղէն և արծաթեղէն ամաններով, Տագգայի մետաքսեղէններով և Իրանու խնկեղէններով, և գնա յերկիրն Միգիլա, առ Նիմի, որդի Բաւագայի, հայր Բարաւատի մօրդ։ Նիմի ունի չորս դուստր որ իւր տան զարդերն են։

Նիմիի տունը ճաչելէդ վերջ՝ նոցա գեղեցկագոյնն ընտրէ քեզ կին և բեր այսր հօր հրամանաւ, որպէս զի սրբոտագինս օրհնեմ զերկուսանդ և զորդիս ձեր։ Վիւչականա ըսաւ։ Եթէ չորեքին հաւասար գեղեցիկ լինին, առաքինի և երկիւղած Աստուծոյ, կրնա՞մ զմին ընտրել՝ առանց միւսները վշտացնելու և գաղտնի լացնելու։ և չպիտի՞ ըսեն։ Էր այս մարդը մեր տունը վիշտ բերաւ։

Ցայնժամ Աճիկարտա ըսաւ։ առքառապատիկ ընծայ եւ տուր իւրաքանչիւրին, այսու չ'պիտի նախանձին միմեանց վերայ։

Բայց Վիւչականա ըսաւ։ Զո՞րն ընտրեմ։ Աճիկարտա պատասխանեց։ Տէրը պիտի ցուցնէ քեզ նշան մը։—Ով ոք զառաջինն զքեզ ողջունէ, դնա ընտրէ քեզ կին և անցուր նորա պարանոցն հարանախօսական նշանդ (Դ-ա)։

Այս վերջին խօսքերէն գոհանալով և խրախուսուելով՝ Վիւչականա առաւ զոյգ մի սպիտակ փիղ եւ զայն բեռնաւորեց ընծայներով և առնլով հօր օրհնութիւն՝ յուզի անկաւ ի Միգիլա։

Ցետ բազում աւուրց, Վիւչականա նշմարեց ցանկափակ ոռոգեալ ընդարձակ դաշտ մի։ Մօտեցաւ մըշակի մ'որ կ'աշխատէր երգելով, եւ հարցուց նմա՝ թէ որո՞մ է այս որիզի դաշտն։

Եւ մշակն՝ առանց իւր աշխատութենէն դադրելու՝ պատասխանեց։ Այս դաշտ կը պատկանի Բաւագայի որդւոյն, Նիմիի։

Ցետաւ ի հեռուստ երինջներու և ցլուց անթիւ երամներ, և մօտեցաւ

(3) Նոյնոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս յորժամ ջրուորն ելանէր։ Եւ ասէ։ Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, յայսոքեա առաջի իմ այսօր։ և այս ողորմութիւն ընդ տեառն իմում Աբրահամու։ Ահաւասիկ ես կամ ի վերայ աղբեր ջրոյս, և դստերք բնակչաց քաղաքիս ելանեն հանել ջուր։ եւ եղիցի կոյս մի որում ես ասացից թէ խոնարհեցո զասփորդ քո զի արբից, եւ ասէ ցիս՝ ա՛րբ, և ուղտացդ քոց ես արբուցից՝ մինչեւ դադարեսցին յըմպելոյ։ զայն պատրաստեցեր ծառայի քում Իսահակայ, և այնու գիտացից թէ արարեր ողորմութիւն տեառն իմում Աբրահամու։ Եւ եղեւ մինչչև կատարեալ էր նորա զխօսսն ի մտի իւրում, եւ ահա Ռեբեկա եկն ել, որ ծնեալն էր Բաթուելի որդւոյ Մեղքեայ կնոջ, Նաքովրայի եղբօր Աբրահամու։ Եւ ունէր սափոր յուս, եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք յոյժ, կոյս՝ որ զայր ոչ գիտեր, էլ յայրիւրն։ . . .

(4) Եւ եհարց զնա՝ և ասէ։ Որդ դուստր ես դու, պատմեա ինձ թէ իցէ՞ ի տան քում մեզ տեղի իջևանաց։ Եւ ասէ ցնա։ Դուստր Բաթուելի եմ ես որդւոյ Մեղքեայ զոր ծնաւ Նախովր։ և ասէ ցնա։ Եւ յարդ և խոտ չատ է մեր, և տեղի իջևանայ։ Ինդաց այրն, և երկիր եպագ Աստուծոյ, և ասէ։ Օրհնեալ Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, որ ոչ վրիպեցոյց զարդարութիւն իւր և զճշմարտութիւն ի տեառնէ իմմէ։ և ինձ յաջողեաց Տէր ի տան եղբօր տեառն իմոյ։ Եւ ընթացաւ աղջիկն պատմեաց ի տան մօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ . . .

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԱՆԴԱՐԱՆ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ

ՓՈՐՁԵԱԼ ԵՒ ՀԱՍՏԱՏԵԱԼ

Ամէն կարգի անձնաւորութեան, մանաւանդ տանտիկնոջ ձեռքը գտնուելու արժանի զոյն օգտակար գրքոյկը որ 120 հրահանգներէ կը բաղկանայ, Հայ գրավաճառաց և ի Պահչէ Գաբու Ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղայից քով կը վաճառի ի գին 3 դահեկան։ 2—5

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԱՅ

Ստորագրեալս պատիւ ունի ներկայիս ծանուցանել իր բազմաթիւ յաճախորդաց թէ Եւրոպայի հռչակաւոր գործարաններէն այն ինչ բերել տուած է նոր և վերջին կատարելագործութեան համեմատ մեքենայներ, ժամանակիս պահանջմանց ըստ ամենայնի յարմար, որանցմով կարելի է ամէն չափով և ձեւով լուսանկարներ արտագրել ի կատարեալ գոհունակութիւն ամենէն դժուարագած յաճախորդաց։

Մեր բազմաթիւ բարեկամք կարող են համոզուիլ մեր ըսածներուն պարզ այցելութեամբ ի մեր գործատուն, ուր կարող պիտի լինին ուենալ դիւրամատչելի գներով ընտիր և ամենամաքուր լուսանկարներ։ Ստորագրեալս միշտ անձամբ կը հանէ լուսանկարներն առանց երկրորդական պաշտօնեայից ձեռքը ձգելու։

Արդէն 25 տարիներէ ի վեր մեր յաճախորդաց նկատմամբ մեր տան ունեցած բարւոք յարաբերութիւններն ինքնին բացայայտ ապացոյցներ են մեր ըսածներուն ճշդութեան։

Օգը երբ ամպոտ է, լուսանկարն երբէք տարբերութիւն չունենար։ գործատանս մէջ թէ արանց և թէ կանանց համար մանաւանդ վարսայարդար մը կը գտնուի։

ԼՈՒՍԱՆԿԱՐԱՏՈՒՆ
ՆԻԳՈՂԱՒՍԻ ԱՆՏՐԻՈՄԷՆՕ

99, Ս-ը-ր-ն Պ-ա-ղ-ա Քէ-ս-ի-ն-ը-ը Պ-ը. 99
129 Կ. Պ-ա- 54—90

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Տպարան եւ Գրատուն
ԲԱՑԻԿՈՍ

Ն. Հ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Զազմազնըլար Եօզուսու
Ցակոբեան խան, Թիւ 8, 9, 10, 11

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ բարեյիշատակ Հօրս՝ Ճանիկ Արամեանի հանրաւաղոր Տպարանն՝ զոր ցարդ օսար ձեռքեր կը վարեին՝ այս ամսոյս ուղղակի մեր վարչութեան ներքեւ առած եմ։

Այս առթիւ պէտք եղած միջոցներն ի գործ դրած եմ՝ շիտի զոհացնելու համար զամէն ինոմ՝ որ բարեհաճեն իրենց վստահութեամբ պատուել զմեզ։

Տպարանիս մէջ կը գտնուին Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Յունարէն, Պուլկարերէն եւայլ ամէն տեսակ տառեր՝ իրենց պարզ եւ զարդարուն տեսակօք։ Ինչպէս յառաջ ևս այսու եւս ամենամեծ խնամով պիտի տպագրուին ամէն տեսակ գրքեանք, ինչպէս նաեւ հարսանեկան Հրաւիրագիրներ, Ալբեռներներ, Նամակագրութիւք, Մահագրոյժ եւայլն, եւն։

Տպարանս իրեն նշանաբան ընտրած է Գնոյ չափաւորութիւն, պարկեշտութիւն, փութաջանութիւն եւ այն ամեն հանգամանքներ որ յատուկ էին ճանիկ Արամեան Տպագրատան։ Կը հրաւիրուին Պաս. Հեղինակք եւ Արգոյ Ազգային փորձով հաստատել մեր ըսածներն։

ՆԵՐՍԷՍ Ձ. ԱՐԱՄԵԱՆ

ՄԱՆՈՒ. — Գաւառներէ եկած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ եւ փութով կը կատարուին։

ՍԳՈՒԹԻ ՄՕՌԻՒ ՁԵԱՆ ՕՇԱՐԱԿ

Կ. Պոլիս, 25 սեպտ. 1889

Պարոնայք Ագդ և Պուռն,

Յորմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Ագդի Ոշարակը, միշտ լաւ արդիւնքներ ունեցայ մանկանց խուլային և անարիւնութեան հիւանդութեանց քանի մը դեպքերու մէջ։

Իմ կարծիքս է թէ այս հաճոյ և յաջող պատրաստութիւնը միշտ նախամեծար համբարելու է Մօտիս ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն։

ՏՐ. Ա. ԱՆՏՐԷԱՆՆ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակին

ԱԶԴ

ՄՕՍ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բէր-ա շոգենաւը, նաւապետ Ճօնս, ամբոյս դէպ ի Ցին Լիվերբուլէն ասա կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Բերա, Պարբզ աղաճ, Թիւ 15, 17, 19 [Ագա ճամբ]

Իր տեսակին մէջ միակ հաստատութիւն յԱրեւելս

Ամէնէն զօրաւոր և կատարելագործեալ գործիներով օժտուած

Պերճանք, հանգստութիւն և ժամանութիւն ի միասին

ՏՆՕՐԷՆ՝ ՏՈՒԹՈՐ ՍԻՈՒԹԻՍ

Ն-ԷԿԷՆ-ԷՐ-Ի-ՆԷ Բ-ԷՐԷ Բ-ՐԷՆ Հ-Ա-ՆԴ-Ա-Ն-Ց-Ց

ԼՈԳԱԱԱՆ ԵՒ ՏՈՒՇ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ

Լեկերականութիւն—Կախու�—Թարմամարզ
Վարսայարդար—Մասաժ—Յանարգոյժ
Ջինավարժութիւն Աբանց

ԿՐ ԴԱՐՄԱՆՈՒՒՆՆ ԵՒ ԿԸ ԲՈՒԺՈՒՒՆ

Անարիանութիւն, Լոգնութիւն, Ջլախտութիւն, Անկարողութիւն, Անդամալուծութիւն, Ցամաքոսի հիւանդութիւնք, եւն եւն.

ՄԷԿ ՔԱՆԻ ԳԻՆԵՐ

ԼՈԳԱՐԱՆՔ	Բ կարգի 4 դրշ.	—Ա կարգի	6 դրշ.
ԹԱՓՋ ՏՈՒՇ	Բ » 8 »	—Ա »	5 »
ՏԱՔՔ ՁԵՒ ՏՈՒՇ	Բ » 5 »	—Ա »	7 »

Դիզիրով լոգարաններու համար գիները կը զանազանուին գեղին գոյն համեմատ.

Բաժանորդագրութեան համար 10 % զեղչ
Դպրոցներու եւ ընտանեաց համար
մասնաւոր պայմանք 35

ԻԼԱՆ

ՊԱՂԸ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Գայսերի վէ Եօզդատ մալընտան եուն քիլիմ ատէտ գրբդ պին, պէ-հէրի եիրմի պիր դուրուշ օն փարա.

Փօթին չերիտի արշունը ճէտիտ իքի պին, պէհէր արշունը ճէտիտի գրբդ փարա.

Թաթլը չերիշ գրյեէյի ճէտիտ պին իքի եիւզ, պէհէր գրյեէյի ճէտիտի իքի զրուշ օթուզ փարա.

Պէեազ գրվրբճբդ մէշինի ատէտ իւշ պին պէշ եիւզ, պէհէր ատէտի եէտի պուչուգ զուրուշ.

Նըվէտ լամա թիմուրը գրյեէյի ճէտիտ իքի պին, պէհէր գանթարը ճէտիտի եիւզ գրբդ զուրուշ.

Մբիսլբդ թիմուր գրյեէյի ճէտիտ իքի պին, պէհէր գանթարը ճէտիտի եիւզ եէթմիշ զուրուշ.

Նալբդ Նըվէտ թիմուրը տէմէթ էլլի, պէհէր գանթարը ճէտիտի եիւզ ալթմիշ զուրուշ.

Տէօրթլիք սաճ տէմէթ օթուզ, պէհէր գանթարը ճէտիտի եիւզ եէթմիշ զուրուշ.

Պէհէր ֆբյբսը գրբդ քիլօբդ գարֆիչա ֆբյը օն պէշ՝ ատէտ Նիմէրօ եիրմի եէտի, օն պէշ ատէտ՝ Նիմէրօ օթուզ ալթը ֆբյը օթուզ պէհէր ֆբյբսը եէթմիշ իւշ պուչուգ զուրուշ.

Եէբլի իմալի թիմուրթը քէօրիւեի ատէտ պիր զրուշ ալթը եիւզ էլլի, սարաճխանէ անպարբնտա պէհէր սէնէ զարֆբնտա լիւզումբնա կէօրէ պօեանաճագ քէթէն պէզի զօղալարբն պօեա իւճբէթի.

Միւպայեա օյընմագ իւզբէ մէվգբի միւնագասաեա գօնբլան պալատէ մուհարբէր օն պիր գալէմ էշեանբն թբլբինը սանինին եէտինճի կիւնի զարաբը գաթիրէրինին վիրիլմէսի մուգարբէր օլաբզրնտան իթասբնա վէ սէքիզինճի կիւնի եիւզատ պէշ թէնզիլիկ թալիպ օլանլարբն մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիլէ տալիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

5 թբլբինը սանի 90	836
Նո. 2	1—3

ԻԼԱՆ

ՊԱՂԸ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Նիզամիէ էրզաղ անպարը իյուն պէշ պին գրյեէյէն օն պին գրյեէյէ գատար միւպայասբնա լիւզում կէօրիւնէն վէ մէվգբի միւնագասաեա վազ օլբնան զէյլիժունբն պէհէր գրյեէյի ճէտիտի իքի զրուշ օն պէշ փարաեա թալիպի էօհտէսինտէ օլուպ էօնիւմիզտէբի չիհարչէնպէհ կիւնի գարաբը գաթիսի վիրիլէրէք իրթէսի փէնչէնպէհ կիւնի եիւզատ պէշ թէնզիլի գապալ օլբնաճաղբնտան թէնզիլբը ֆիլիթի իլէ իթասբնա թալիպ օլանլարբն մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիլէ տալիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

3 թբլբինը սանի 90	835
Նո. 1	2—3

Ο ΒΑΝΘΕΩΝ ‖ AU PANTHEON

ԳԱԼՖՕԲՈՒԼՕ ԵՂԲԱՐՔ

Բերա Մեծ Փողոց Կալաթա-Սէրայի մեծ դրան դէմ, Թիւ 206

Գալֆոբուլօ եղբարք պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ Բարիզէն ստացած են իրենց եղանակին Նորելու կներու մթերքն, որ է կանանց զգեստներու համ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

37

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒՍ ՄԷՐՔԸՆԹԱՑԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 10,075,212
ՀԱՍՈՅԹ 1889 ՏԱՐԻՈՅ 2,170,355

ՆՕՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,781,300
ՀԱՍՈՅԹ 1889 ՏԱՐԻՈՅ 989,400

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած բարեական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուժած գումարն 20,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼԻՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 **ՄԱՐԻԹԱՅՄ.** ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Մէհմէտ Ալի փաշա խան գետնայարկ թիւ 22 և 22 կ. սենեակներն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ կ. Պոլսոյ Վերայիշեալ երեք Ընկերութեանց

VICHY

ՎԻՇԻ

Ֆրանսա (գաւառ Ալիէի)

ԿԱԼՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ փարիզ, 8, Պուլվար Մոնմարթր

ՀԱՆՔԱՋՐՈՑ ԵՂԱՆԱԿ

GRANDE GRILE — Աւշային տկարութիւնք, մարսողական ճանապարհաց հիւանդութիւնք, լեարդի և փայծաղի խըբու